# LOS ANGELES COMMUNITY COLLEGE DISTRICT (ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔՈԼԵՋԻ ՕԿՐՈՒԳ)

# ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ C-14

**ԹԵՄԱ՝** Արգելված խտրականության, անօրինական ճնշման և սեռական ոտնձգության բողոքների ընթացակարգերը

## Բովանդակություն


I. Սույն վարչական կանոնակարգը լրացնում է Խորհրդի XV-րդ կանոնը և այն ներառում հղումով: ... 3

II. Սահմանումներ ... 3

Ա. Փաստաբան ... 3

Բ. Ենթադրյալ տուժող ... 3

Գ. Դիմում ... 3

Դ. Վարքային միջամտության թիմ կամ ՎՄԹ ... 4

Ե. Քոլեջի Title IX համակարգող ... 4

Զ. Բողոք ... 4

Է. Գաղտնի, Գաղտնիություն ... 5

Ը. Համաձայնություն ... 5

Թ. Տեսակցության բռնություն ... 5

Ժ. Օրեր ... 6

Ի. Որոշում ... 6

Լ. Օկրուգ ... 6

Խ. Ընտանեկան բռնություն ... 6

Ծ. Կրթական ծառայությունների կենտրոն ... 6

Կ. Արագ արձագանքման ծառայություն ... 6

Հ. Սեռ ... 7

Ձ. Ճնշում սեռով պայմանավորված ... 7

Ղ. Սեռական զուգընկեր ... 7

Ճ. Սեռական զուգընկերոջ բռնություն ... 8

Մ. Լիազորված թղթակից ... 8

Յ. Մտավոր հաշմանդամություն ... 8

Ն. Ֆիզիկական հաշմանդամություն ... 9

Ո. Արգելված խտրականություն ... 11

Չ. Ջեկուցող անհատ .......... 11
Պ. Պատասխանող .......... 11
ԱԱ. Պատասխանատու աշխատակից .......... 12
ԲԲ. Ճնշիչ, պատժիչ միջոցներ .......... 12
ԳԳ. Սեռական ճնշում .......... 13
ԴԴ. Սեռական ոտնձգություն .......... 15
ԵԵ. Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմ .......... 16
ԶԶ. Սեռական կողմնորոշում .......... 17
ԷԷ. Սեռական բռնություն .......... 17
ԸԸ. Հոգեբանական ճնշում .......... 17
ԹԹ. Վերահսկող .......... 17
ԺԺ. Title IX համակարգող .......... 18
ԻԻ. Անօրինական ճնշում .......... 18
III. Դերեր և պարտականություններ .......... 20
Ա. Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրեն .......... 20
Բ. Title IX Համակարգող .......... 21
Գ. Քոլեջի Title IX Համակարգողներ .......... 23
Դ. Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցներ .......... 24
Ե. Փաստաբան .......... 25
Զ. Վերահսկողներ .......... 25
Է. Աշխատակիցներ .......... 26
IV. Կեղծ հայտարարություններ .......... 27
V. Գաղտնիություն և Գրառումների պահպանում .......... 27
VI. Ոչ ֆորմալ բողոքարկման ընթացակարգ .......... 28
VII. Ֆորմալ բողոքարկման ընթացակարգ .......... 30
VIII. Title IX (Գլուխ IX) .......... 33
IX. Սեռական ոտնձգության հետաքննություն և հաշվետվողականություն .......... 36
X. Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակցի հաշվետվությունը .......... 41
XI. Որոշում .......... 43
XII. Կարգապահական գործ .......... 45
XIII. Բողոքարկումներ .......... 47
XIV. Լրացուցիչ միջոցներ .......... 48

I. <u>Սույն վարչական կանոնակարգը լրացնում է Խորհրդի XV-րդ կանոնը և այն ներառում հղումով:</u>

II. <u>Սահմանումներ</u>

Ա. <u>Փաստաբան</u>

Սույն «Փաստաբան» տերմինը վերաբերում է այն անձին, որը վերապատրաստվել է Title IX համակարգողի կողմից՝ աջակցելու Զեկուցող կողմին և/կամ Ենթադրյալ տուժողին կամ Պատասխանողին սովորաբար Սեռական ոտնձգության գործում, բացառությամբ ստորև նշված Ուսանողների փաստաբանների: Փաստաբանի աջակցությունը կարող է ներառել բարոյական աջակցության տրամադրումը, ինչպես նաև դատավարական հարցերին վերաբերող տեղեկատվություն հետաքննության ողջ ընթացքում վերջին ներքին Դիմումի միջոցով: Յուրաքանչյուր հաստատություն (քոլեջ և կրթական ծառայությունների կենտրոն) պետք է ողջ ընթացքում ունենա առնվազն երկու Փաստաբան և նախընտրելի է, որ ունենա գոնե չորսը: Փաստաբանը քոլեջի և Օկրուգի ազդեցություններից անկախ է, և պահպանում է յուրաքանչյուրի Գաղտնիությունը, որին նա աջակցություն է տրամադրում: Սեռական ոտնձգության հարցերում Փաստաբանի ծառայությունները երկու կողմերին էլ հասանելի են վերջնական, ներքին Դիմումի ժամանակահատվածում: Այս պաշտոնը իր մեջ ընդգրկում է նախկին «Ուսանողների փաստաբանի» պաշտոնը: Բոլոր փաստաբանները պետք է հասանելի լինեն աջակցելու ուսանող կողմերին ոչ Սեռական ոտնձգության բողոքի ընթացքում՝ գործի մեկնարկից մինչև վերջնական գրավոր Որոշում:

Բ. <u>Ենթադրյալ տուժող</u>

«Ենթադրյալ տուժող» տերմինը վերաբերում է այն անձին, ով սույն քաղաքականության բռնության օբյեկտ է եղել:

Գ. <u>Դիմում</u>

«Դիմում» տերմինը վերաբերում է Զեկուցող անհատի և/կամ Ենթադրյալ տուժողի կողմից արված պահանջին, որը գրավոր կերպով ներկայացվել է Los Angeles Community College District-ի հոգաբարձուների խորհրդին՝ համաձայն 5-րդ Գլխի 59338-րդ բաժնի, և/կամ Նահանգային քոլեջի ռեկտորի գրասենյակ՝ համաձայն 5-րդ գլխի 59339-րդ բաժնի, վերանայելու խտրականության Բողոքի վերաբերյալ Օկրուգի վարչական մարմնի որոշումը:

## Դ. <u>Վարքային միջամտության թիմ կամ ՎՄԹ</u>

«Վարքային միջամտության թիմ» տերմինը կամ «ՎՄԹ-ն» յուրաքանչյուր Քոլեջում վերաբերում է խմբի կամ թիմի և գանձվող Կրթական ծառայությունների կենտրոնում, այլ պարտականություններից զատ ունենալով պարտականություն վերահսկելու, հովանավորելու, կանխելու, միջամտելու և առաջարկելու կրթական ծրագրեր կրթական ճամբարում կամ Կրթական ծառայությունների կենտրոնում, որոնք վերաբերում են Սեռական ոտնձգությանը և պատասխանում են Սեռական ոտնձգության հայտարարություններին, ինչպես նշված է վերևում սույն IX-րդ Գլխում ընդգծված ընթացակարգերի սահմաններում:

Վարքային միջամտության թիմը կարող է ընտրել համապատասխանել իր Սեռական ոտնձգության պարտականություններին Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմի ծառայությունների շրջանակում, որը ստեղծվել է Վարքային միջամտության թիմի կողմից կամ մեկ այլ կերպ: Պարտականությունները նույնն են հովանավորել սեռական ոտնձգությանը վերաբերող կրթական ծրագրերը, կանխարգելմանը և միջամտությանը իրենց իսկ հաստատությունում:

## Ե. <u>Քոլեջի Title IX համակարգող</u>

«Քոլեջի Title IX համակարգող» տերմինը վերաբերում է այն անհատին, ով նախատեսված է վերահսկել Սեռական ոտնձգության հարցերը Օկրուգի առանձնահատուկ քոլեջում կամ վայրում:

## Զ. <u>Բողոք</u>

«Բողոք» տերմինը նշանակում է գրավոր կամ բանավոր հայտարարություն, որը վկայակոչում է սույն փաստաթղթում սահմանված Արգելված խտրականությունը, Անօրինական ճնշումը կամ Սեռական ոտնձգությունը:

Բողոքը կարող է ներկայացվել այն անձի կողմից, ով վկայակոչում է, որ նա անձամբ տուժել է Արգելված խտրականությունից, Անօրինական ճնշումից և Սեռական ոտնձգությունից կամ այն անձի կողմից, ով տեղեկացել է հնարավոր Արգելված խտրականության, Անօրինական ճնշման և Սեռական ոտնձգության մասին ի պաշտոնե, և անհատի կամ հաստատության կողմից, որը ներկայացրել է Բողոքը՝ որպես ԲՈՒՀ-ի դասախոս կամ ադմինիստրատոր, և անհատի կամ հաստատության կողմից, որը ներկայացրել է Բողոքը մեկ այլ անհատի կամ անհատների խմբի անունից:

## Է. Գաղտնի, Գաղտնիություն

«Գաղտնի և գաղտնիություն» տերմինները նշանակում են, որ բացի այն անձը, որը տվյալ տեղեկատվությունը ձեզ է պատմել, չպետք է տարածվի որևէ մեկ այլ անձի մոտ:

## Ը. Համաձայնություն

«Համաձայնություն» տերմինը, երբ օգտագործվում է, վերաբերում է Սեռական ոտնձգության հարցերին փոխադարձ, ազնիվ և անմիջական համաձայնությամբ: Համաձայնությունը երբեք չի նշանակում և չի կարող ենթադրվել նույնիսկ հարաբերության համատեքստում:

1. Համաձայնությունը պետք է լինի.
   - **ա.** տեղեկացված (իմացյալ)
   - **բ.** կամավոր (ազատորեն տրված)
   - **գ.** ակտիվ (ոչ պասիվ)
   - **դ.** համաձայնեցված գործողության (սեռական) վերաբերյալ պարզ բառերով կամ գործողություններով, և
   - **ե.** նշելով համաձայնությունը՝ ներգրավվելու փոխադարձ համաձայնեցված (սեռական) գործողությամբ:
   - **զ.** Այն նաև պետք է լինի շարունակական սեռական հարաբերության ընթացքում:

2. Համաձայնությունը չի կարող արդյունք լինել.
   - **ա.** ուժի,
   - **բ.** ֆիզիկական բռնության,
   - **գ.** սպառնալիքների
   - **դ.** վախեցածության,
   - **ե.** հարկադրում, ներառյալ հաճախականության, ուժգնության, մեկուսացվածության և տևողության դիտարկումը, կամ
   - **զ.** անկարողության, որն արդյունք է դեղահաբերի, ալկոհոլի, քնի, մտավոր կամ ճանաչողական խանգարման, վնասվածքի կամ այլ պայմանի, որը եղել կամ պետք է հայտնի լինեին մեղադրյալին: Հարձակվողի արբեցած վիճակը չպետք է նվազեցնի հարձակվողի պատասխանատվությունը սեռական հարձակման կամ սեռական ոտնձգության համար:

3. «Ոչ»-ի բացակայությունը «Այո» չի նշանակում:

## Թ. Տեսակցության բռնություն

«Տեսակցության բռնություն» տերմինը ներառված է Սեռական զուգընկերոջ բռնությունում, տե՛ս ստորև.

Ժ. <u>Օրեր</u>

«Օրեր» տերմինը նշանակում է օրացույցային Օրերը, եթե այլ բան նշված չէ: «Աշխատանքային օր» կնշանակի երկուշաբթիից մինչև ուրբաթ, երբ Օկրուգը բաց է, արդյոք կամ ոչ դասերը ուսումնական տարում են: Երբ գործողության վերջին օրը կամ սահմանված ժամկետը շաբաթ կամ կիրակի է լինում, վերջնաժամկետը կլինի հաջորդ Աշխատանքային օրը:

Ի. <u>Որոշում</u>

«Որոշում» տերմինը վերաբերում է ստորև VII-րդ Բաժնում նկարագրված վարչական որոշմանը և ինչպես տրված է 5-րդ Գլխի 59336-րդ բաժնում:

Լ. <u>Օկրուգ</u>

«Օկրուգ» տերմինը վերաբերում է Los Angeles Community College District-ին կամ որևէ Օկրուգային ծրագրի կամ գործողության, որն անմիջապես ֆինանսավորվել է նահանգի կողմից կամ ֆինանսական աջակցությունը ստանում է Նահանգի կամ Դաշնային կառավարության կողմից, ներառյալ ուսանողի ֆինանսական աջակցությունը: Սա ներառում է Օկրուգի անձնակազմի հանձնաժողովը և Օկրուգին առնչվող որևէ այլ կազմակերպության կամ իր քոլեջներին, որոնք ստանում են նահանգային կամ Դաշնային ֆինանսավորում կամ ֆինանսական աջակցություն Օկրուգի միջոցով: Սույն փաստաթղթում ենթադրում է Կրթական ծառայությունների կենտրոն:

Խ. <u>Ընտանեկան բռնություն</u>

«Ընտանեկան բռնություն» տերմինը ներառված է ստորև նշված Սեռական զուգընկերոջ բռնությունում:

Ծ. <u>Կրթական ծառայությունների կենտրոն</u>

«Կրթական ծառայությունների կենտրոն» տերմինը վերաբերում է վարչական միավորին, որը ծառայում և աջակցում է Օկրուգի քոլեջներին, որը ներկայումս տեղակայված է 770 Wilshire Blvd., Լոս Անջելես, Կալիֆորնիա հասցեում և նախկինում հայտնի էր որպես «Օկրուգի գրասենյակ»:

Կ. <u>Արագ արձագանքման ծառայություն</u>

«Արագ արձաքանքման ծառայություն» տերմինը վերաբերում է անհատին, ով վերապատրաստված է տրամադրել Ենթադրյալ տուժողին անհապաղ աջակցություն և ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվություն: Արագ արձագանքման ծառայության

պարտականությունները ավելի մեծ են քան Պատասխանատու աշխատակցինը: Արագ արձագանքման ծառայությունը իր տեղանքում պետք է նաև մասնակցի Վարքային միջամտության թիմում:

## Հ. Սեռ

«Սեռ» տերմինը ներառում է անձի Սեռի ինքնությունը և Սեռով պայմանավորված արտաքին տեսքը և պահվածքը, արդյոք կամ ոչ կարծրատիպորեն առնչվում է անձի ծնունդով ստանձնած սեռին: Տե՛ս նաև ստորև նշված «Սեռական կողմնորոշում» սահմանումը:

## Ձ. Ճնշում սեռով պայմանավորված

«Սեռով պայմանավորված ճնշում» տերմինը վերաբերում է ոչ սեռական բնույթի անցանկալի վարքագծին՝ պայմանավորված Սեռով կամ Սեռի կարծրատիպով, ներառյալ բանավոր, ոչ բանավոր և ֆիզիկական ագրեսիան, վախեցնելը կամ թշնամանքը:

## Ղ. Սեռական զուգընկեր

«Սեռական զուգընկեր» տերմինը վերաբերում է այն անձին, ում հետ անձը ունի կամ ունեցել է սերտ անձնական հարաբերություն, որը կարող է բնութագրվել մի քանի կամ բոլոր կետերով. զուգընկերոջ զգացմունքային կապվածություն, կանոնավոր շփում, ընթացիկ ֆիզիկական շփում և սեռական վարքագիծ, հաստատում որպես զույգ և հարազատություն մեկը մյուսի կյանքի մասին ինֆորմացիայով:

Սեռական զուգընկերոջ հարաբերությունները ներառում են ընթացիկ և նախկին.

- ամուսիններ (ամուսնացած ամուսիններ, քաղաքացիական ամուսիններ, քաղաքացիական միությամբ ապրող ամուսիններ, ընտանեկան զուգընկերներ)
- ընկերներ/ընկերուհիներ
- ժամադրվող զուգընկերներ
- ներկայիս սեռական զուգընկերներ

Սեռական զուգընկերները կարող են միասին ապրել, կարող են և ոչ: Սեռական զուգընկերները կարող են  հակառակ կամ նույն սեռից լինել:  Եթե Ենթադրյալ տուժողը և Պատասխանողը ընդհանուր երեխա և նախկին, բայց ոչ ներկայիս հարաբերություն ունեն, ապա սահմանմամբ նրանք նախկին Սեռական զուգընկերների կատեգորիայում են դիտարկվում:

Ճ. <u>Սեռական զուգընկերոջ բռնություն</u>

«Սեռական զուգընկերոջ բռնություն» տերմինը վերաբերում է վարքագծին, որն իր մեջ ներառում է ֆիզիկական ուժ կամ վախեցում նման ուժի ցուցադրմամբ, որը նպատակ ունի վիրավորել, վնասել կամ սպանել Սեռական զուգընկերոջը ինչպես վերևում է նշված, սա հաճախ առաջանում է Սեռական ոտնձգության տեսքով:

Մ. <u>Լիազորված թղթակից</u>

«Լիազորված թղթակից» տերմինը վերաբերում է այն անձին, ումից, իր մասնագիտական պաշտոնի արդյունքում, պահանջվում է զեկուցել երեխայի հանդեպ բռնության հայտարարությունները կամ կասկածանքները և արհամարել տեղական իրավապահներին՝ համաձայն Կալիֆորնիայի Բռնության և արհամարման Զեկուցվող ակտի, Կալիֆորնիայի Քրեական օրենսգրքի 11164 – 11174.3-րդ բաժինների, և հատկապես 11165.7-րդ բաժնի:

Յ. <u>Մտավոր հաշմանդամություն</u>

«Մտավոր հաշմանդամություն» տերմինը ներառում է, սակայն չի սահմանափակվում բոլոր հետևյալ նշվածներով.

1. Ունենալ որևէ մտավոր կամ հոգեբանական խանգարում կամ պայման, ինչպես օրինակ զարգացման հաշմանդամություն, գլխուղեղի օրգանական սինդրոմ, զգացմունքային կամ մտավոր հիվանդություն կամ առանձնահատուկ սովորելու հաշմանդամություն, որը սահմանափակում է կյանքի գործունեության մեծ մասը: Այս բաժնից ելնելով՝

   ա. «Սահմանափակումները» պետք է սահմանվեն՝ չառնչվելով մեղմացնող միջոցներին, ինչպես օրինակ դեղեր, օժանդակ սարքեր կամ խելամիտ հարմարություններ, քանի դեռ մեղմացնող միջոցը ինքնին չի սահմանափակում հիմնական կյանքի գործունեությունը:

   բ. մտավոր կամ հոգեբանական խանգարումը կամ պայմանը սահմանափակում են հիմնական կյանքի գործունեությունը, եթե այն հիմնական կյանքի գործունեությունը դժվարացնում է:

   գ. «Հիմնական կյանքի գործունեությունը» պետք է լայնորեն մեկնաբանվի և պետք է ներառի ֆիզիկական, մտավոր և սոցիալական գործողությունները և աշխատանքը:

2. Որևէ այլ մտավոր կամ հոգեբանական խանգարում, որը նկարագրված չէ (Ա) (1) պարբերությունում, որը պահանջում է մասնագիտացված աջակցող ծառայություններ:

3. Ունենալ մտավոր կամ հոգեբանական խանգարման կամ վիճակի պատմություն կամ գրառումներ, որոնք նկարագրված են (Ա) (1) կամ (2) պարբերությունում, որը հայտնի է Օկրուգին:

4. Օկրուգի կողմից ընկալվել կամ վերաբերվել որպես որևէ մտավոր խնդիր ունեցող կամ ունեցած անձ, որը հիմնական կյանքի գործունեության ձեռքբերումը դժվարացնում է:

5. Օկրուգի կողմից ընկալվել կամ վերաբերվել որպես որևէ մտավոր կամ հոգեբանական խանգարում կամ վիճակ, ունեցող կամ ունեցած անձ, որը չունի որևէ առկա մահացու վտանգավոր ազդեցություն, սակայն կարող է դառնալ մտավոր հաշմանդամություն, ինչպես նկարագրված է (Ա) (1) կամ (2) պարբերությունում:

6. «Մտավոր հաշմանդամությունը» չի ներառում սեռական վարքագծի խանգարումներ, խաղամոլություն, կլեպտոմանիա, պիրոմանիա կամ պսիխոտրոպ նյութերի օգտագործման խանգարումներ, որոնք հանգեցնում են վերահսկվող նյութերի կամ այլ դեղահաբերի ներկայիս անօրինական օգտագործմանը:

Ն. <u>Ֆիզիկական հաշմանդամություն</u>

«Ֆիզիկական հաշմանդամություն» տերմինը ներառում է, սակայն չի սահմանափակում բոլոր հետևյալ նշվածներով.

1. Ունենալ որևէ հոգեբանական հիվանդություն, խանգարում, վիճակ, կոսմետիկ դեֆեկտ կամ անատոմիական կորուստ, որը կատարում է հետևյալ երկուսը.

   ա. ազդում է մարմնի համակարգերի հետևյալ մեկ կամ մի քանիսին՝ նյարդաբանական, իմունոլոգիական, ոսկրամկանային, հատուկ զգայական օրգաններ, շնչառական, ներառյալ խոսքային օրգանները, սրտանոթային, վերարտադրողական, մարսողական, միզասեռական, հեմիկ և լիմֆատիկ, մաշկ և էնդոկրին:

   բ. սահմանափակում է հիմնական կենսագործունեությունը.

(i) «սահմանափակումները» պետք է սահմանվեն հաշվի չառնելով մեղմացնող միջոցներ, ինչպես օրինակ դեղամիջոցներ, օժանդակ սարքեր, պրոթեզավորում կամ խելամիտ հարմարություններ, քանի դեռ մեղմացնող միջոցը ինքնին չի սահմանափակում հիմնական կենսագործունեությունը:

(ii) հոգեբանական հիվանդությունը, խանգարումը, վիճակը, կոսմետիկ դեֆեկտը կամ անատոմիական կորուստը սահմանափակում են հիմնական կենսագործունեությունը, եթե այն հիմնական կենսագործունեության ձեռքբերումը դժվարացնում է:

(iii) «հիմնական կենսագործունեությունը» պետք է լայնորեն մեկնաբանվի և ներառում է ֆիզիկական, մտավոր և սոցիալական գործողությունը և աշխատանքը:

2. Որևէ այլ առողջական խանգարում, որը նկարագրված չէ (Ն) (1) պարբերությունում, որը պահանջում է մասնագիտացված աջակցող ծառայություններ:

3. Ունենալ հիվանդության, խանգարման, վիճակի, կոսմետիկ դեֆեկտի, անատոմիական կորստի կամ առողջական խանգարման պատմություն կամ գրառում, որը նկարագրված է (Ն)(1) կամ (2) պարբերությունում, որը հայտնի է Օկրուգին:

4. Օկրուգի կողմից ընկալվել կամ վերաբերվել որպես որևէ ֆիզիկական խնդիր ունեցող կամ ունեցած անձ, ինչը հիմնական կյանքի գործունեության ձեռքբերումը դժվարացնում է:

5. Օկրուգի կողմից ընկալվել կամ վերաբերվել որպես հիվանդություն, խանգարում, վիճակ, կոսմետիկ դեֆեկտ, անատոմիական կորուստ կամ առողջական խանգարում ունեցող կամ ունեցած անձ, որը չունի որևէ առկա մահացու վարակող ազդեցություն, սակայն  կարող է դառնալ Ֆիզիկական հաշմանդամություն, ինչպես նկարագրված է (Ն)(1) կամ (2) պարբերությունում:

6. «Ֆիզիկական հաշմանդամությունը» չի ներառում սեռական վարքագծի խանգարումներ, խաղամոլություն, կլեպտոմանիա, պիրոմանիա կամ պսիխոտրոպ նյութի օգտագործման

խանգարումներ, որոնք հանգեցնում են վերահսկվող նյութերի կամ այլ դեղահաբերի ներկայիս անօրինական օգտագործմանը:

Ճ. <u>Անձնական տեղեկատվության պահպանում</u>

«Անձնական տեղեկատվության պահպանում» տերմինը նշանակում է տեղեկատվության տարածում միայն այն անհատների միջև, ովքեր դրա կարիքը ունեն, ինչպես օրինակ Title IX համակարգող, և միայն այդ անհատին անհրաժեշտ տեղեկատվության տարածումը իր աշխատանքը կատարելու նպատակով:

Ռ. <u>Արգելված խտրականություն</u>

«Արգելված խտրականություն» տերմինը նշանակում է անօրինական խտրականություն պաշտպանված դասի հիմքով, արված ինչ-որ մեկի կողմից, աշխատավայրում կամ կրթական հաստատությունում: «Պաշտպանված դասը» ներառում է ռասայի, գույնի, ազգային ծագման, կրոնի, սեռի (ներառյալ  հղիության, երեխայի ծննդի և առնչվող բժշկական պայմանների), հաշմանդամության, տարիքի (40 կամ ավելի մեծ), և գենետիկական տեղեկատվությունը  Դաշնային օրենքի համաձայն, ինչպես նաև ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամությունը, ամուսնական կարգավիճակը, սեռական կողմնորոշումը և ինքնությունը, ՁԻԱՀ-ի/ՄԻՎ-ի վիճակը, առողջական վիճակը, զինվորական կամ վետերանի կարգավիճակը, և կարգավիճակը ՝ որպես Ընտանեկան բռնության, հարձակման կամ հոգեբանական ճնշման զոհ՝ Կալիֆորնիայի օրենքի համաձայն:

Այս ցանկում ենթադրվում է, որ պետք է ներառվի որևէ նոր պաշտպանված դասեր, որոնք ավելացվել են դաշնային կամ նահանգային օրենքով, նույնիսկ եթե սույն փաստաթղթում այն մասնավորապես նշված չէ:

Չ. <u>Զեկուցող անհատ</u>

«Զեկուցող անհատ» տերմինը վերաբերում է այն անձին, ով տեղեկացնում է քոլեջին կամ Կրթական ծառայությունների կենտրոնին սույն քաղաքականությամբ ընկալվող բռնության մասին, նախկինում հայտնի էր որպես «բողոքատու»:

Պ. <u>Պատասխանող</u>

«Պատասխանող» տերմինը վերաբերում է այն անհատին, ով պատասխանում է Բողոքին, որը ներկայացվել էր, ենթադրելով, որ նա խախտել է սույն քաղաքականությունը, նաև հայտնի որպես «ենթադրյալ հանցագործ»:

## ԱԱ. Պատասխանատու աշխատակից

«Պատասխանատու աշխատակից» տերմինը վերաբերում է անձին, ով աշխատում է Los Angeles Community College District-ի համար, ով համաձայն Քոլեջի Title IX-ի, պատասխանատվություն ունի զեկուցել Քոլեջի Title IX Համակարգողին Սեռական ոտնձգության կամ Սեռական ճնշման դեպքերի մասին Քոլեջում կամ Քոլեջի հետ կապված, Օկրուգում կամ Օկրուգի հետ կապված, որի մասին նրան պատմել են կամ նա տեսել է։

Հոգեկան առողջության մասնագետները և հոգևորականները «պատասխանատու աշխատակիցներ» չեն, երբ հանդես են գալիս իրենց մասնագիտական առումով և ուստի ազատված են Title IX-ին զեկուցելու պարտականությունից, քանի որ ծանոթ են նյութի հետ անմիջականորեն, որն առնչվում է ուսումնական ծրագրին։

Արագ արձագանքման ծառայությունը կարող է և լինել և չլինել Պատասխանատու աշխատակից՝ կախված քոլեջում կամ Կրթական ծառայությունների կենտրոնում իր այլ դերից (երից), սակայն նրա գործողությունները ավելի լայն են, քան Պատասխանատու աշխատակցինը։ Տե՛ս վերևում նշված «Արագ արձագանքման ծառայություն» հատվածը։ Եվ Պատասխանատու աշխատակիցը և Արագ արձագանքման ծառայությունը կարող են Վարքային միջամտության թիմի անդամներ լինել որպես Սեռական հարձակման արձագանքման թիմ, ինչպես նկարագրված է սույն կանոնակարգերում։

## ԲԲ. Ճնշիչ, պատժիչ միջոցներ

«Ճնշիչ, պատժիչ միջոցներ» տերմինը վերաբերում է անօրինական ճնշման արգելված ձևին։ Ճնշիչ, պատժիչ միջոցը վերաբերում է վնասակար անձնական վարքագծին կամ անբարենպաստ զբաղվածությանը կամ գիտական որոշումներին, որոնք առաջնայնորեն հիմնված են անհատի մասնակցության վրա որպես տուժող, Պատասխանող, հետաքննող, որոշում կայացնող, ներկայացուցիչ կամ խորհրդատու կամ այլ անհատ, ինչպես արգելված է նահանգային կամ դաշնային օրենքով։

1. Բողոքի մեկնարկումը, որը ենթադրում է արգելված խտրականություն, անօրինական, սեռական ճնշում կամ Սեռական ոտնձգություն, չպետք է պատճառ հանդիսանան որևէ բացասական անդրադարձի այն անհատի հանդեպ,

որը մեկնարկել էր Բողոքը կամ այն անհատի հանդեպ, որը սահմանվել է որպես Ենթադրյալ տուժող, եթե տարբեր չէ:

2. Ուսանողի դեպքում Բողոքի ներկայացումը չպետք է ազդի նրա գնահատականի, դասի ընտրությունների կամ այլ հարցերի վրա՝ հաշվի առնելով անդամագրման կարգավիճակը որպես Օկրուգի ուսանող:

3. Նմանապես, անբարենպաստ գործողությունները (ինչպես վերը նշվեցին) չպետք է իրականացվեն Պատասխանողի նկատմամբ, այնքան ժամանակ քանի դեռ նրա մասին ենթադրություններ են արվում, մինչև տվյալ հարցի վերջնական լուծումը: Առաջ քաշված հանգամանքները, քանի որ վերջնական որոշումը եզրակացնում է, որ Պատասխանողի գործողությունները խտրականության մակարդակի են, վրեժխնդրություն չեն և սույն սահմանմամբ բացառվում են:

4. Որևէ վնասակար գործողություն անհատի հանդեպ, որը խտրականության հայց էր ներկայացրել, հետաքննությունում որևէ կերպ մասնակցելու կամ վկայություն տալու նպատակով վարույթ կամ սույն օրենքների շրջանակում դատական գործ, կամ հակազդելու զբաղվածության պրակտիկան, որը նրանք խելամտորեն հավատում են, որ խտրական է, վրեժխնդրություն է և ուստի անօրինական ճնշում, որը խախտում է սույն կանոնակարգը:

## ԳԳ. <u>Սեռական ճնշում</u>

«Սեռական ճնշում» տերմինը նշանակում է անօրինական խտրականություն անբարենպաստ սեռական դրսևորումների տեսքով, սեռական ծառայությունների պահանջներ, և այլ բանավոր, տեսողական կամ ֆիզիկական բնույթի ֆիզիկական պահվածք, որը կատարվել է ինչ-որ մեկի կողմից աշխատավայրում կամ կրթական հաստատությունում, և ստորև սահմանված Սեռական ոտնձգության տեսքով է: Սեռական ճնշումը ներառում է, սակայն չի սահմանափակվում.

1. Կատարել չպահանջված, գրավոր, բանավոր, ֆիզիկական և/կամ տեսողական շփում սեռական ակնարկով:

(Հավանական սեռական ճնշման օրինակները, որոնք գրավոր տեսքով են երևում, ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով. խելամիտ կամ անպարկեշտ նամակներ, երկտողեր կամ հրավերներ: Հավանական տեսողական սեռական ճնշման օրինակները ներառում, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ տհաճ հայացքի նետում, ժեստեր, սեռական ազրեսիվ առարկաների, նկարների, մուլտֆիլմերի կամ պաստառների ցուցադրում:

2. Շարունակել արտահայտել սեռական հետաքրքրություն այն բանից հետո, երբ տեղեկացվել է, որ նրա հետաքրքրությունը անցանկալի է:

3. Ճնշամիջոցների, ճնշամիջոցի սպառնալիքների կամ ճնշամիջոցի ենթադրյալ սպառնալիքների իրականացում, որոնք հաջորդում են ճնշող վարքագծի կտրուկ մերժմանը: Օրինակ՝ վաստակած կամ արժանացած գնահատականների վերաբերյալ ակնարկումը կամ փաստացի մերժումը, վատ կատարողական գնահատականի պատրաստումը կամ կրթաթոշակի երաշխավորման առաջարկը, կամ քոլեջի դիմումը կմերժվի:

4. Բացահայտ կամ ոչ բացահայտ հարկադիր սեռական վարքագծի ներգրավվումը աշխատանքային միջավայրում, որն օգտագործվում է վերահսկելու, ազդելու կամ ներգործելու աշխատակցի կարիերային, աշխատավարձին և/կամ աշխատանքային միջավայրին:

5. Բացահայտ կամ ոչ բացահայտ հարկադիր սեռական վարքագծի ներգրավվումը աշխատանքային միջավայրում, որն օգտագործվում է վերահսկելու, ազդելու կամ ներգործելու կրթական հնարավորությունները, գնահատականները և/կամ ուսանողի ուսուցման միջավայրը:

6. Առաջարկել հնարավորություններ կամ կրթական կամ զբաղվածության առավելություններ, ինչպես օրինակ

գնահատականներ կամ առաջխաղացումներ, նպաստավոր կատարողական ցուցանիշներ, նպաստավոր հանձնարարություններ, նպաստավոր պարտականություններ կամ հերթափոխեր, երաշխավորագրեր, վերադասակարգումներ և այլն՝ սեռկան ծառայության դիմաց։

7. Կրթական կամ զբաղվածության առավելությունների շնորհում, ինչպես օրինակ գնահատականներ կամ պարտականություններ կամ հերթափոխեր, երաշխավորագրեր, վերադասակարգումներ և այլն որևէ ուսանողի կամ աշխատակցի, որի հետ որոշում կայացնողը սեռական հարաբերություն ունի և նման առավելությունների մերժումը՝ մյուս ուսանողներին կամ աշխատակիցներին։

## ԴԴ. Սեռական ոտնձգություն

«Սեռական ոտնձգություն» տերմինը վերաբերում է չհամաձայնեցված սեռական գործողությանը, որտեղ պարզ, իմացյալ և կամավոր Համաձայնությունը ինչպես սահմանված է սույն փաստաթղթում և՛ նախքան, և՛ սեռական գործողության ընթացքում բացակայում է։ Սեռական ոտնձգությունը ներառում է «սեռական ճնշումը», քանի որ այդ տերմինն է սույնով սահմանված.

1. Սեռական ոտնձգության (վարքագծի) խախտումները ներառում, սակայն չեն սահմանափակվում Չհամաձայնեցված սեռական հարաբերությամբ, սահմանված է որպես.

**ա.** որևէ սեռական ներթափանցում կամ հարաբերություն (անալ, օրալ կամ հեշտոցային)
**բ.** այնուամենայնիվ մի փոքր
**գ.** որևէ առարկայով
**դ.** մեկ այլ անձի կողմից մյուսի հանդեպ
**ե.** որն առանց Համաձայնության է և/կամ ուժով
**զ.** Սեռական ներթափանցումը ներառում է հեշտոցային, օրալ, անալ ներթափանցումը առնանդամի, լեզվի, մատի կամ առարկայի կողմից, կամ օրալ շփումը

բերանով կամ սեռական օրգանների շփումը կամ սեռական օրգանը բերանի շփումով:

է. Չհամաձայնեցված սեռական հարաբերությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում բռնաբարությամբ, հարկադիր սոդոմիայով, հարկադիր զուգավորմամբ կամ արտաքին առարկայի կողմից բռնաբարությամբ:

**2.** Սեռական ոտնձգության խախտումները նաև ներառում են Չհամաձայնեցված սեռական շփում, սահմանված որպես.

**ա.** որևէ միտումնավոր սեռական հպում
**բ.** ամեն դեպքում մի փոքր
**գ.** որևէ առարկայով
**դ.** մեկ այլ անձի կողմից մյուսի հանդեպ
**ե.** որը առանց Համաձայնության է և/կամ ուժով:
**զ.** Սեռական հպումը ներառում է որևէ մարմնական շփում կրծքերի, աճուկի, սեռական օրգանների,բերանի կամ մեկ այլ անհատի այլ մարմնական բացվածքի հետ, կամ որևէ այլ մարմնական շփում սեռական եղանակով:
**է.** Չհամաձայնեցված սեռական հարաբերությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում սեռական բնույթի բռնի գործողություններով կամ սեռական հարձակման սպառնալիքով:

**3.** Ի հավելումն վերը նշված այս ակտերի, Սեռական ոտնձգությունը ներառում է Սեռական ճնշում, Հոգեբանական ճնշում, Տեսակցության բռնություն, Ընտանեկան բռնություն և Սեռական զուգընկերոջ բռնություն:

## ԵԵ. <u>Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմ</u>

«Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմ» տերմինը վերաբերում է յուրաքանչյուր քոլեջում կամ Կրթական ծառայությունների կենտրոնում մի խմբի կամ թիմի, որը կազմակերպված է և գործում է տվյալ վայրի Վարքային միջամտության թիմի հովանու ներքո՝ հովանավորելու կրթական ծրագրերի կանխարգելումը, միջամտումը ճամբարում կամ Կրթական ծառայությունների կենտրոնում, որն առնչվում է սեռկան ոտնձգությանը, և նպատակ ունենալով պատասխանել Սեռական ոտնձգության հայտարարություններին, ինչպես

սահմանված է վերևում, սույնով ընդգծված Title IX ընթացակարգերի սահմաններում:

**ՁՁ.** <u>Սեռական կողմնորոշում</u>

«Սեռական կողմնորոշում» տերմինը նշանակում է հետերոսեքսուալություն, հոմոսեքսուալություն, բիսեքսուալություն, ասեքսուալություն կամ այստեղ նշված որևէ վարիացիա կամ համակցում: Սեռական կողմնորոշումը ներառում, սակայն չի սահմանափակում. լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, հարցական սեռի, ինտերսեքսուալ, և ասեքսուալ:

**ԷԷ.** <u>Սեռական բռնություն</u>

«Սեռական բռնություն» տերմինը վերաբերում է հարկադիր ֆիզիկական, սեռական ակտին, որը կատարվել կամ փորձ է արվել մեկ այլ անձի կողմից՝ առանց ազատ Համաձայնության տրամադրման:

**ԸԸ.** <u>Հոգեբանական ճնշում</u>

«Հոգեբանական ճնշում» տերմինը վերաբերում է վարքագծի ընթացք (երկու կամ ավելի ակտ), հատուկ անձին ուղղված, պաշտպանված դասում փաստացի կամ ընկալվող անդամագրության հիման վրա, որն անբարենպաստ է, և կառաջացնի խելամիտ անձնավորության վախը իր կամ մյուսների անվտանգության հանդեպ, կամ կկրի էական զգացմունքային սթրես: Հոգեբանական ճնշումը սահմանվում է որպես մեկ այլ անձին պարբերաբար հետևում, դիտում և ճնշում: Հոգեբանական ճնշումը կարող է ներառել իրավաբանական, համապատասխան վարքագիծ, ինչպես օրինակ մեկին ծաղիկներ ուղարկելը կամ սպասել նրա աշխատավայրի դիմաց՝ նրան տեսնելու նպատակով: Ամեն դեպքում, երբ այս դրսևորումները կրկնապատկվում են՝ մտադրություն ունենալով վախ կամ վնասվածք ներարկել, նրանք կարող են հոգեբանական ճնշման հատվածի մաս դառնալ:

**ԹԹ.** <u>Վերահսկող</u>

«Վերահսկող» տերմինը վերաբերում է Օկրուգի որևէ աշխատակցի, ով այլ անձանց վրա վերահսկելու լիազորություն ունի, ներառյալ սակայն չի սահմանափակվում ֆակուլտետի դեկաններով, ակադեմիական և դասակարգված ղեկավարներով, վերահսկողներով և ադմինիստրատորներով, և նշանակում է

ցանկացած անձ, որի աշխատանքի նկարագրությունը ներառում է վերահսկողի պարտականություն: Վերահսկողի այս սահմանումը կկիրառվի միայն սույն քաղաքականության համատեքստում:

**ԺԺ. Title IX համակարգող**

«Title IX համակարգողը» վերաբերում է անհատին, ով նախատեսված է վերահսկել Title IX-ի և Սեռական ոտնձգության հարցերը Լոս Անջելեսի համայնքային քոլեջի ողջ օկրուգով: Title IX Համակարգողը նաև պատասխանատու է Կրթական ծառայությունների կենտրոնում Title IX-ի և Սեռական ոտնձգության հարցերի վերահսկման համար, որի պատասխանատվությունը կարող է փոխանցվել:

**ԻԻ. Անօրինական ճնշում**

«Անօրինական ճնշում» տերմինը վերաբերում է անօրինական խտրականությանը պաշտպանված դասի հիմքերով, որը կատարվել է անձի կողմից կամ աշխատավայրում կամ կրթական հաստատությունում: «Պաշտպանված դասը» ներառում է ռասայի, գույնի, էթնիկ ծագման, կրոնի, սեռի (ներառյալ հղիություն, երեխայի ծնունդ և դրան առնչվող առողջական վիճակներ), հաշմանդամություն, տարիք (40 կամ ավելի մեծ), և գենետիկական տեղեկատվություն Դաշնային օրենքի շրջանակում, ինչպես նաև ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամություն, ամուսնական կարգավիճակ, սեռական կողմնորոշում կամ ինքնություն, ՁԻԱՀ/ՄԻՎ-ի վիճակ, առողջական վիճակ, և որպես Ընտանեկան բռնության, հարձակման տուժողի կարգավիճակ կամ հոգեբանական ճնշում Կալիֆորնիայի օրենքի շրջանակում: Այս ցանկը ենթադրվում է, որ պետք է ներառի դաշնային կամ նահանգային օրենքի կողմից ավելացված որևէ նոր պաշտպանված դասեր, նույնիսկ եթե սույնով մասնավորապես թվարկված չէ:

1. Անօրինական ճնշումը անբարենպաստ վարք է, որը հիմնված է ռասայի, գույնի, կրոնի, սեռի (ներառյալ հղիություն), էթնիկ ծագման, տարիքի (40 կամ ավելի մեծ), հաշմանդամության կամ գենետիկական տեղեկատվության կամ այլ պաշտպանված դասի վրա: Ճնշումը անօրինական է դառնում, երբ (ա) վիրավորական վարքի հանդուրժումը դառնում է շարունակական զբաղվածության կամ ուսանողական կարգավիճակի պայման, կամ (բ) վարքը բավարար դաժան կամ գերիշխող է՝ ստեղծելու դպրոց կամ

աշխատանքային միջավայր, որը խելամիտ անձը կհամարեր վախեցնող, թշնամական կամ վիրավորական: Անօրինական լինելու համար, պահվածքը պետք է ստեղծի աշխատավայր կամ գիտական միջավայր, որը խելամիտ մարդկանց համար կլինի վախեցնող, թշնամական կամ վիրավորական:

2. Վիրավորական պահվածքը կարող է ներառել, սակայն չի սահմանափակվում վիրավորական կատակներով, ակնարկներով, ածականներով կամ անվան դիմելաձևով, ֆիզիկական հարձակումներով կամ սպառնալիքներով, վախեցումով, քմծիծաղով կամ ծաղրումով, վիրավորանքներով կամ կոպիտ դիտարկումներով, վիրավորական առարկաներով կամ նկարներով և աշխատանքի կամ ուսումնական կատարողականության միջամտությամբ:

3. Վրեժը սույնով սահմանված Անօրինական ճնշման ձև է:

4. Անօրինական ճնշումը կարող է առաջանալ մի շարք հանգամանքներում, ներառյալ, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

   ա. Ճնշողը կարող է լինել տուժողի վերահսկողը մեկ այլ տարածքում, գործատուի գործակալը, գործընկերը, դասավանդողը կամ ադմինիստրատորը, որը կարողություն ունի ազդելու ուսանող տուժողի կամ ոչ աշխատակցի գնահատականների կամ ուսումնական գրառումների վրա:

   բ. Տուժողը չպետք է անպայման ճնշման ենթարկված անձը լինի, սակայն կարող է լինել որևէ մեկը, որը ներգործության է ենթարկվել վիրավորական պահվածքով, կամ,

   գ. Ճնշումը կարող է պատահել առանց տնտեսական կամ կրթական վնասի կամ տուժողի հեռացման կամ հրաժարման:

5. «Սեռական ճնշումը» անօրինական խտրականություն է անբարենպաստ սեռական մերձեցումների, սեռական

ծառայությունների պահանջների և այլ բանավոր, տեսողական կամ սեռական բնույթի ֆիզիկական պահվածքի տեսքով, որն արվել է անձի կողմից աշխատավայրում կամ կրթական հաստատությունում, ինչպես սահմանված էր վերևում:

## III. Դերեր և պարտականություններ

Այս բաժնում նշված անհատները Արգելված խտրականության, Անօրինական ճնշման, Սեռական ոտնձգության և/կամ Title IX-ի հետ առնչվող պարտականություններ ունեն:

### Ա. Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրեն

1. Պատասխանատու պարտականություններ՝ Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրենը պատասխանատու է ստանալ բողոքներ Խորհրդի XV-րդ կանոնի համաձայն և համակարգող հետաքննություններ Օկրուգի ներսում, այլ կառավարական գործակալություններից և դրսի աղբյուրներից: Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրենը, Տնօրենի բացակայության դեպքում, կարող է Բողոքների ստացումը հանձնել Նորմատիվփիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակցին:

2. Title IX-ի պարտականությունները՝ Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրենը պատասխանատու է Title IX Համակարգողին ուղղված սեռական ճնշման և Սեռական ոտնձգության բոլոր դեպքերի հղման համար, այն բանից հետո, երբ Տնօրենը հետաքննության նպատակով տվյալ գործը հանձնարարում է Նորմատիվփիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակցին:

3. Պարտականությունների իրականացում՝ բացի այլ պարտականություններից, որոնք նախատեսված են տվյալ պաշտոնի համար, Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրենը պետք է պատասխանատու լինի Խորհրդի 15000-րդ կանոնի իրականացման և Օկրուգի համապատասխանության համար դաշնային և նահանգային օրենքներով և Արգելված խտրականությանն առնչվող կանոնակարգերով:

4. Վերապատրաստման պարտականություններ՝ Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրենը պետք է պատասխանատու լինի Title IX Համակարգողի, Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցների, և այլ աշխատակիցների վերապատրաստման հնարավորությունների կազմակերպման համար, որոնք առնչվում են սույն քաղաքականությամբ սահմանված իրենց պարտականություններով:

5. Պահանջվող հաշվետվությունների պատասխանատու՝

   ա. Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրենը պետք է ուղարկի որևէ դիմումի պատճենը Արդար զբաղվածության և բնակարանային պայմանների ապահովման բաժնի հետ մեկտեղ Նահանգային կանցլերի գրասենյակ:

   բ. Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրենը պետք է պատասխանատու լինի Նահանգային կանցլերի գրասենյակ հաշվետվությունների կատարման համար, ինչպես պահանջվում է 5-րդ Գլխի 59336-րդ, 59338-րդ և 59340-րդ բաժիններում:

B. <u>Title IX Համակարգող</u>

1. Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրենի հետ մեկտեղ պատասխանատու է Սեռական ոտնձգության և սեռական ճնշման դեպքերի հետաքննությունների համար: Title IX Համակարգողը պատասխանատու է սեռական ճնշման և Սեռական ոտնձգության բոլոր դեպքերի ընթացքի տրման համար, քանի դեռ Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրենը չի հանձնարարել դրանք Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակցին իրենց եզրակացության միջոցով, ներառյալ, սակայն չի սահմանափակվում Բողոքի գնահատմամբ, դատավարության ընդունմամբ, վերահսկումների, գրառումների պահպանմամբ, նմուշների ցուցադրմամբ և այլապես իրականացնելով 1972թ-ի Կրթական բարեփոխումների Title IX-ը (IX-րդ Գլխում):

   Title IX Համակարգողը պետք է զեկուցի Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրենին սեռական

ճնշման և Սեռական ոտնձգության հայտարարությունների հետաքննության վերաբերյալ:

2. Վերապատրաստում. Title IX Համակարգողը պատասխանատու է Քոլեջի Title IX Համակարգողների համար վերապատրաստման հնարավորությունների կազմակերպման համար: Title IX Համակարգողը պետք է պատասխանատու լինի Title IX փաստաբանների վերապատրաստման համար, որի պարտականությունը կարող է հանձնվել Քոլեջի Title IX Համակարգողներին:

3. Իրականացման պատասխանատու.

**ա.** Այլ նախատեսված պարտականություններից զատ, Title IX Համակարգողը պետք է պատասխանատու լինի Օկրուգի Սեռական ոտնձգության քաղաքականության իրականացման համար, ներառյալ Title IX Սեռական ոտնձգության հարցերի հետ կապված հաշվետվողականության պահանջերի հետ: Title IX Համակարգողը պետք է պատասխանատու լինի ադմինիստրատորների և այլ աշխատակիցների վերապատրաստման հնարավորությունների կազմակերպման համար, որոնք առնչվում են Title IX-ի Սեռական ոտնձգության հարցերին:

**բ.** Քոլեջների համար Օկրուգում Title IX-ի քաղաքականությունների և ընթացակարգերի զարգացման համար և դրանց հրապարակման պատրաստման պատասխանատուն պետք է լինի Title IX Համակարգողը Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրենի խորհրդով և համաձայնությամբ:

**գ.** Յուրաքանչյուր քոլեջի և Օկրուգի միջև Փոխըմբռնման հուշագրի առկայության պատասխանատու մի կողմից և մոտակա բռնաբարության ճգնաժային կենտրոն:

**դ.** Los Angeles Community College District-ի և Լոս Անջելեսի օկրուգի շերիֆի բաժանմունքի (որն իրականացնում է Քոլեջի և Կրթական ծառայությունների կենտրոնի անվտանգությունը) միջև պայմանագրային պայմանավորվածությունների վերանայման պատասխանատու՝ ընդգրկելու չափանիշներ, եթե այլապես չեն ներառված Փոխըմբռնման հուշագրում Title IX-ի տեղեկատվության և պարտականությունների համակարգման համար:

4. Clery ակտին առնչվող պարտականություններ. Title IX Համակարգողը պետք է պատասխանատու լինի ապահովելու, որ իրեն զեկուցված յուրաքանչյուր հարց նաև Քոլեջին և Կրթական ծառայությունների կենտրոնի տնօրենի գրասենյակին է զեկուցվել՝ նպատակ ունենալով ապահովել ընթացիկ, պատշաճ Clery ակտի հաշվետվությունները յուրաքանչյուր վայրում: Նման պատասխանատվությունը կհանձնվի Քոլեջի Title IX Համակարգողներին:

## Գ. Քոլեջի Title IX Համակարգողներ

1. Հանձնարարություն և անուղղակի ենթակայություն. Քոլեջի Title IX Համակարգողները նշանակվում են իրենց պաշտոնին քոլեջի նախագահի կողմից և վերջ ի վերջո զեկուցում են քոլեջի նախագահին: Ամեն դեպքում, նրանք նույնպես տվյալ մասով պատասխանատվությունը հանձնել են Title IX Համակարգողին, ով վերահսկում է Օկրուգի բոլոր Title IX-ի գործողությունները, ներառյալ յուրաքանչյուր քոլեջում:

2. Վերապատրաստում. Title IX Համակարգողը պետք է Քոլեջի Title IX Համակարգողներին խորհուրդ տա վերապատրաստման հնարավորությունների մասին և պետք է նրանց տրամադրի ընթացիկ տեղեկատվություն Title IX-ի թարմացումների հետ կապված, ինչպես նաև տրամադրի ընթացիկ խորհրդատվություն յուրաքանչյուր Քոլեջի Title IX-ի Համակարգողին:

3. Դերը. Քոլեջի Title IX Համակարգողը տվյալ քոլեջի համար Title IX-ի դեմքն է: Նա պատասխանատու է՝ ապահովվելու, որ Title IX-ի տեղեկատվությունը տարածվի ճամբարով մեկ, որ Title IX-ի Օկրուգի կողմից տրամադրվող վերապատրաստումը պետք է հասանելի լինի ճամբարի անձնակազմին և որ Title IX-ի և սեռական ոտնձգության ծրագիր առկա է քոլեջում:

   Բողոքների հետ կապված, Քոլեջի Title IX Համակարգողը կարող է պատասխանատու լինել բողոքի սկզբնական ընդունման և տուժողի և/կամ բողոքատուի հետ առաջին հանդիպման համար: Նա պատասխանատու է գնահատելու կարիքը որևէ ուսումնական կամ այլ հարմարությունների իրականացման համար, որոնք անհրաժեշտ են զեկուցվող սեռական ոտնձգության հետ կապված: Քոլեջի Title IX Համակարգողը չունի որևէ հետաքննչական պարտականություններ, նա պետք է ապահովի, որ բողոքը զեկուցվել է Title IX Համակարգողին

Օկրուգի գրասենյակում և/կամ Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրենին, ինչպես նաև համապատասխան տեղեկատվության տարածումը քոլեջի Տնօրենի բաժանմունքում:

Նա կարող է հաստատել Քոլեջի Title IX-ի փաստաբաններին և ապահովել, որ քոլեջը պահպանում է Փաստաբանների ամբողջական ցանկը:

## Դ. <u>Նորմատիվփիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցներ</u>

1. Հանձնարարություն և անուղղակի ենթակայություն. Նորմատիվփիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցները պետք է զեկուցեն Տնօրենին, Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրենին կապված այն գործերի հետ, որոնք հանձնարարվել են Նորմատիվփիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակցին Տնօրենի կողմից: Նորմատիվփիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցները պետք է իրենց Title IX-ի հետաքննությունների արդյունքները զեկուցեն Title IX Համակարգողին Title IX-ի Բողոքներին առնչվող ճշգրիտ գրառումների պահպանման նպատակով:

2. Վերապատրաստում.

   ա. Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրենը պատասխանատու է ապահովելու համապատասխան վերապատրաստման հնարավորություններ և տրամադրելու ընթացիկ խորհրդատվություն յուրաքանչյուր Նորմատիվփիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակցի:

   բ. Title IX Համակարգողը պետք է պատասխանատու լինի ապահովելու, որ Քոլեջի Title IX Համակարգողները և բոլոր Նորմատիվփիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցները ստանան համապատասխան վերապատրաստում, որն առնչվում է Title IX-ի օրենքի և կանոնակարգերի հետ, քանի որ այն կիրառվում է իրենց աշխատանքում:

3. Դերը. Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակցի դերը պետք է լինի որպես անկողմնակալ ռեսուրս, փաստահավաք և հետաքննող և ոչ որպես փաստաբան որևէ կողմի համար: Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցը նաև հետաքննում է Title IX-ի Բողոքները և պատասխանատու է կիրառելու նույն անկողմնակալ փաստահավաքության և հետաքննության հմտությունները և զեկուցում է ենթադրյալ Title IX-ի բռնությունները որպես այլ հետաքննություններ:

Ե. <u>Փաստաբան</u>

1. «Փաստաբան» տերմինը վերաբերում է այն աշխատակցին, ով աջակցում է Զեկուցող կողմին, Ենթադրյալ տուժողին կամ Պատասխանողին՝ հասկանալով գործի ընթացքը: Սա կարող է ներառել բարոյական աջակցության տրամադրումը, ինչպես նաև դատավարական հարցերին վերաբերող տեղեկատվությանը հետաքննության ողջ ընթացքում և վերջին ներքին Դիմումով:

2. Յուրաքանչյուր քոլեջ և Կրթական ծառայությունների կենտրոն պետք է առնվազն երկու աշխատակից ունենան, ովքեր կծառայեն որպես Փաստաբաններ, նախընտրելի է սակայն չորսը: Փաստաբանի աշխատանքը ընդհատումներով է, սակայն՝ անհրաժեշտության դեպքում՝ կարևոր:

3. Սեռական ոտնձգության դեպքեր. Սեռական ոտնձգության հարցերում Փաստաբանի ծառայությունները հասանելի են երկու կողմերին էլ, մինչև վերջնական Դիմումի ժամանակահատվածը:

4. Ուսանող կողմ. Ուսանող կողմը որևէ բողոքի նկատմամբ, անկախ նրանից բողոքատու, ենթադրյալ հանցագործ թե տուժող, իրավունք ունի օգտվել Փաստաբանի ծառայություններից գործի մեկնարկից մինչև վերջնական գրավոր որոշումը: Այս պաշտոնը իր մեջ ընդգրկում է նախկին «Փաստաբան ուսանողների համար» պաշտոնը:

Զ. <u>Վերահսկողներ</u>

Բոլոր վերահսկողները պետք է պատասխանատու լինեն սույն քաղաքականությանն համապատասխան աշխատանքային միջավայրի պահպանմանը: Որևէ վերահսկող, ով իրավիճակի վերաբերյալ իրազեկ է

դառնում, որը կարող է խելամտորեն ընկալվել սույն քաղաքականության խախտում, պարտավոր է զեկուցել այդ տեղեկատվությունը: Սեռական ոտնձգություն ներգրավվող հարցրեր պետք է զեկուցվեն Քոլեջի Title IX Համակարգողին կամ Կրթական ծառայությունների կենտրոնում՝ Title IX Համակարգողին: Արգելված խտրականության կամ ոչ սեռական ճնշան այլ ձևեր ներառող հարցերը պետք է զեկուցվեն Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի Տնօրենին: Սույն պարբերությանը համապատասխանելու ձախողումը կարող է պատժի հիմք հանդիսանալ:

## Է. Աշխատակիցներ

1. Օկրուգի ամեն աշխատակից, ներառյալ դասավանդող և դասակարգված անձնակազմ, պետք է պատասխանատու լինի սույն քաղաքականությանն համապատասխան կրթական միջավայրի պահպանության համար: Որևէ աշխատակից, ով տեղեկանում է նման իրավիճակի մասին, որը կարող է խելամտորեն ընկալվել ուսանողի նկատմամբ սույն քաղաքականության խախտում, պարտավոր է զեկուցել այդ տեղեկատվությունը: Սեռական ոտնձգություն ներառող հարցերը պետք է զեկուցվեն Քոլեջի Title IX Համակարգողին կամ Կրթական ծառայությունների կենտրոնում՝ Title IX Համակարգողին: Արգելված խտրականության կամ ոչ սեռական ճնշման այլ ձևերը ներառող հարցերը պետք է զեկուցվեն Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի Տնօրենին: Սույն պարբերությանը համապատասխանելու ձախողումը կարող է պատժի հիմք հանդիսանալ:

2. Երբ Los Angeles Community College District-ի աշխատակիցը Սեռական ոտնձգության հայտարարություն է ստանում, կամ դիտարկում է նման վարքագիծ, այդ անհատը պետք է գործի որպես «Պատասխանատու աշխատակից» և պետք է կատարի հետևյալը.

   ա. Հարցնի Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին, արդյոք նա կարիք ունի բժշկական ուշադրության և, անհրաժեշտության դեպքում, հանձնի նրան շտապ օգնության հսկողությանը, ներառյալ անհապաղ հոգեբանական միջամտությանը, եթե երաշխավորված է,

   բ. Տեղեկացնի Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին և Ենթադրյալ հանցագործին (եթե հաստատվել է ինքնությունը)

քոլեջի և համայնքային ռեսուրսների ցանկը, որից նա կարող է ստանալ հետագա աջակցություն, հասանելի է Քոլեջում կամ Կրթական ծառայությունների կենտրոնի Title IX Համակարգողի գրասենյակում,

գ. Տեղեկացնի Զեկուցող անհատին և Ենթադրյալ տուժողին, որ որպես Los Angeles Community College District-ի աշխատակից, նա պարտավորված է զեկուցել, թե ինչ են Զեկուցող անհատը և/կամ Ենթադրյալ տուժողը պատմում նրան միջադեպի մասին: Հետագայում տեղեկացնի Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին, որ եթե նա ցանկանում է գաղտնի խոսել որևէ մեկի հետ, ապա նա պետք է գնա ճամբարում գտնվող Առողջապահական կենտրոն և խոսի Հոգեկան առողջության մասնագետի հետ, որը հանդես գալով իր մասնագիտական կարողությամբ, կամ Կրթական ծառայությունների կենտրոնից, կապ հաստատի Աշխատակցի աջակցության ծրագրի հետ կամ գնա տեղական կանանց աջակցության կենտրոն կամ բռնաբարության ճգնաժային կենտրոն, ինչպես որ ուղղորդվում է Title IX Համակարգողի կողմից, քանի որ սրանք գաղտնի միջոցներ են, և

դ. Անհապաղ զեկուցի միջադեպի մասին Title IX Համակարգողին կամ Քոլեջի Title IX Համակարգողին:

## IV. Կեղծ հայտարարություններ

Ցանկացած անձ, որը սույն ընթացակարգերի համաձայն Բողոք է ներկայացնում, որում նա իմանալով փաստի վերաբերյալ, կեղծ հայտարարություններ է ներկայացնում, նաև պետք է խախտած լինի սույն քաղաքականությունը և ենթակա է կիրառելի և համապատասխան կարգապահական գործընթացի: Բողոքները, որը Զեկուցող անհատը և/կամ Ենթադրյալ տուժողը այս գործընթացի խախտման մասին կեղծ հայտարարություններ է արել, պետք է կատարվեն միայն այս գործընթացի ընթացքում:

## V. Գաղտնիություն և Գրառումների պահպանում

Ա. Բողոքների հետաքննություններում ներգրավված բոլոր անձինք պետք է պարտականություն ունենն պահպանելու քննարկվող հարցերի գաղտնիությունը, բացառությամբ օրենքով պահանջվող կամ թույլատրելի

դեպքերում, որը ներառում է Օկրուգի կանոններն ու կանոնակարգերը: Անհատների անունները, որոնք վկայակոչում են, որ նրանք սեռական ճնշման կամ սեռական հարձակման են ենթարկվել, և Ենթադրյալ հանցագործների անունները չպետք է բացահայտվեն այն անձնաց կողմից, ովքեր պատասխանատու են այս ընթացակարգերի իրականացման և/կամ դրան առնչվող քաղաքականության դրույթների կիրառման համար, բացառությամբ օրենքով պահանջվող դեպքերի կամ նման հարցերի հետաքննման համար Օկրուգի ընթացակարգերի կողմից:

**Բ.** Հետաքննության կամ բողոքին վերաբերող բոլոր գրառումները պետք է գաղտնի լինեն և չպետք է բացահայտվեն, բացառությամբ օրենքով պահանջվող կամ թույլատրելի դեպքերում, որը ներառում է Օկրուգի կանոնները և կանոնակարգերը կամ Ռեկտորի կամ իր նշանակած անձի հայեցողության տակ է:

**Գ.** Հետաքննության ավարտին յուրաքանչյուր Բողոքի և հետաքննության բնօրինակ գրառումները պետք է պահվեն Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրենի կողմից:

**Դ.** Սույն կանոններով որևէ հարցի վերջնական լուծման ժամանակ, հարցին վերաբերող բնօրինակ փաստաթղթերը և գրառումները պետք է մշտապես պահվեն Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակում և ներգրավված անձանց անուններով խաչաձև հղում արվի: Ֆորմալ բողոքների և Հոգաբարձուների խորհրդին ուղղված դիմումներին վերաբերող փաստաթղթերը պետք է պահպանվեն նույն կերպ:

## VI. Ոչ ֆորմալ բողոքարկման ընթացակարգ

**Ա.** Արգելված խտրականության հայտարարություն ստանալուն պես (չներառելով Սեռական ոտնձգությունը կամ Title IX-ի հարցերը), Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցը կամ Տնօրենը, ինչպես կիրառելի է, պետք է հինգ (5) օրվա ընթացքում կամ էական հիմնավորմամբ, հենց որ այն հնարավոր է կիրառեն.

1. Ծանուցել ֆորմալ Բողոքի ներկայացման ընթացակարգը Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին,

2. Միջոցներ ձեռնարկել ոչ ֆորմալ կերպով մեղադրանքերը լուծելու նպատակով,

3. Խորհուրդ տալ Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին, որ ոչ ֆորմալ մասնակցությունը պարտադիր չէ,

4. Հավաստիացնել Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին, որ նրանից չի պահանջվի դիմակայել կամ մշակել խնդիրները, որով անձը մեղադրվում է Արգելված խտրականության համար։

5. Խորհուրդ տալ Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին, ով զբաղվածությանն առնչվող Բողոք է ներկայացնում, որ նա կարող է Բողոք ներկայացնել ԱՄՆ-ի հավասար զբաղվածության հնարավորության հանձնաժողովին և/կամ Կալիֆորնիայի Արդար զբաղվածության և տնային պայմանների ապահովման բաժին, որտեղ նման Բողոքը տվյալ գործակալության իրավասությանն է պատկանում։

6. Խորհուրդ տալ Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին, ով ոչ զբաղվածությանն առնչվող Բողոք է ներկայացնում, որ նա ցանկացած ժամանակ կարող է Բողոք ներկայացնել Քաղաքացիական իրավունքների գրասենյակ, ԱՄՆ-ի Կրթության դեպարտամենտ, որտեղ նման Բողոքը տվյալ գործակալության իրավասությանն է պատկանում։

7. Խորհուրդ տալ Բողոքին առնչվող որևէ կողմի (Զեկուցող անհատ, Ենթադրյալ տուժող կամ Պատասխանող), որ նա իրավունք ունի Քոլեջի կամ Օկրուգի կողմից տրամադրվող Փաստաբանի ծառայություններից և/կամ մասնավոր ներկայացուցչի ծառայություններից օգտվել, ինչպես սահմանված է C-14 Վարչական կանոնակարգի վերը նշված II.Ա և III. Ե բաժիններում ։

Բ. Ոչ ֆորմալ լուծման որևէ ջանք, որը կատարվել է Ոչ ֆորմալ բողոքի ներկայացումից հետո, չպետք է գերազանցի 30 Օրը։

Գ. Սույն ժամկետներին համապատասխանելու նպատակով, Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցը, ով վարում է ոչ ֆորմալ հետաքննությունը, պետք է կապ հաստատի Պատասխանողի հետ, նույնիսկ եթե նա կանոնավոր կերպով չի ծրագրված մասնակցել Օկրուգին առնչվող գործունեությանը։

Դ. Կարգավորման համաձայնագիր. Եթե Ոչ ֆորմալ ընթացակարգի պրոցեսում լուծում է ձեռք բերվում, Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցը պետք է նախնական պատրաստի կարգավորման համաձայնագիր, որը պետք է ստորագրվի Զեկուցող անհատի և/կամ Ենթադրյալ տուժողի և

Պատասխանողի կողմից: Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցը պետք է վերահսկի իրավիճակը՝ ապահովելու, որ լուծումը պատշաճ կերպով է իրականացվել: Կարգավորման համաձայնագրի իրագործմամբ, հարցին առնչվող բոլոր բնօրինակ նյութերը պետք է մշտապես պահվեն հետաքննող գրասենյակի կողմից և բոլոր ներգրավված կողմերի անուններով խաչաձև հղում արվեն:

## VII. <u>Ֆորմալ բողոքարկման ընթացակարգ</u>

**Ա.** Բողոք. Զեկուցող անհատը և/կամ Ենթադրյալ տուժողը կարող են արգելված խտրականության, անօրինական ճնշման և/կամ Սեռական ոտնձգության Բողոքը հետևեն՝ բանավոր կամ գրավոր հաղորդակցվելով Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի Տնօրենի կամ Ռեկտորի տեղակալի հետ: Զեկուցող անհատը և/կամ Ենթադրյալ տուժողը, ապա պետք է աջակցություն ստանան՝ պատրաստելու գրավոր Բողոքի ընթացքը Զեկուցող անհատի և/կամ Ենթադրյալ տուժողի ստորագրման համար:

1. Բողոքը կարող է ներկայացվել ինչ-որ մեկի կողմից, ով վկայակոչում է, որ նա անձամբ տուժել է Արգելված խտրականությունից, Անօրինական ճնշումից և/կամ Սեռական ոտնձգությունից, կամ մեկի կողմից, ով տեղեկացել է հավանական Արգելված խտրականության, Սեռական ճնշման կամ Սեռական ոտնձգության վերաբերյալ ի պաշտոնե՝ որպես տվյալ հաստատության դասավանդող կամ ադմինիստրատոր:

2. Գրավոր բողոքը կարող է, սակայն պարտադիր չէ որ, ներկայացված լինի Նահանգային կանցլերի կողմից նախատեսված ձևաթղթով: Յուրաքանչյուր Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցը և Տնօրենը կտրամադրեն դատարկ ձևաթղթի պատճենը որևէ անձի պահանջի դեպքում:

3. Եթե Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցը և Տնօրենը Բողոք են ստանում , որը չի համապատասխանում այս բաժնի դրույթներին, պետք է անհապաղ ծանուցեն բողոքատուին այն պատճառի մասին, որի համար Բողոքը համարվում է թերի և չի կարող ընթացք տրվել:

**Բ.** Այլընտրանքային բողոքի ներկայացում. Զեկուցող անհատը և/կամ Ենթադրյալ տուժողը կարող են նաև ներկայացնել իրենց գրավոր Բողոքը

անմիջապես Կալիֆորնիայի Համայնքային Քոլեջների Նահանգային Կանցլերի գրասենյակ:

Գ. Ժամանակահատվածը

1. Սեռական ոտնձգություն չներառող գործերում Բողոքը պետք է ներկայացվի ոչ ուշ քան մեկ տարի այն ամսաթվից, երբ Զեկուցող անհատը և/կամ Ենթադրյալ տուժողը գիտեին կամ խելամտորեն պետք է իմացած լինեին Բողոքի հիմքում ընկած փաստերը: Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցը պետք խորհուրդ տա Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին, որ նա նաև կարող է ներկայացնել ոչ զբաղվածության Բողոք Քաղաքացիական իրավունքների գրասենյակ, ԱՄՆ-ի Կրթության դեպարտամենտ, երբ նման Բողոքը գործակալության իրավասությանն է պատկանում: Զբաղվածությունից առաջացող կամ դրան առնչվող Բողոքի համար, Բողոքը կարող է ներկայացվել Արդար զբաղվածության և բնակարանային պայմանների ապահովման բաժին և/կամ Հավասար Զբաղվածության հնարավորության հանձնաժողով: Բոլոր բողոքները պետք է ներկայացվեն մեկ տարվա ընթացքում ենթադրյալ հավանական անօրինական խտրականության ամսաթվից սկսած:

2. Սեռական ոտնձգության (Title IX) Բողոքը պետք է ներկայացվի ենթադրյալ խտրականության ամսաթվից 180 օրվա ընթացքում, մինչ ներկայացման ամսաթիվը չի երկարաձգվել էական հիմնավորման պատճառով Քաղաքացիական իրավունքների գրասենյակի կողմից Իրականացման գրասենյակի տնօրենին, Քաղաքացիական իրավունքների գրասենյակին և ԱՄՆ-ի Կրթության դեպարտամենտ: Նախքան Քաղաքացիական իրավունքների գրասենյակի հետ հաստատությանը Բողոք ներկայացնելը, հավանական Զեկուցող անհատը և/կամ Ենթադրյալ տուժողը  կարող են ցանկանալ օգտագործել Քոլեջի կամ Օկրուգի գործընթացը, որպեսզի Բողոքը լուծում ստանա (սակայն սա պարտադիր չէ): Եթե Զեկուցող անհատը և/կամ Ենթադրյալ տուժողը օգտագործում է Քոլեջի կամ Օկրուգի գործընթացը և ապա ընտրում է դիմել Քաղաքացիական իրավունքների գրասենյակի հետ, նրա Title IX-ի Բողոքը պետք է ներկայացվի Քաղաքացիական իրավունքների գրասենյակի հետ 60 օրվա ընթացքում, երբ Քոլեջի կամ Օկրուգի բողոքարկման գործընթացը ավարտվել է:

3. Հետաքննությունները պետք է ավարտվեն 60 օրացուցային Օրվա ընթացքում, եթե որևէ էական հիմնավորում չկա տվյալ ժամանակը երկարաձգելու համար, որի դեպքում բոլոր կողմերը պետք է տեղեկացված լինեն:

4. Սույն քաղաքականությամբ ժամանակային սահմանափակումները չեն երկարաձգվի կամ հրաժարվի նշանակված ներկայացուցչի անհասանելիությամբ պայմանավորված:

5. Եթե Նորմատիվփիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցը կամ ադմինիստրատորը տեղեկանում է, որ հետաքննությունը կամ Որոշումը չի կարող ավարտվել նշված ժամանակային շրջանակներում, նա պետք է անմիջապես ծանուցի Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի Տնօրենին: Տնօրենը կհասցեագրի հարցը Նահանգային կանցլերի գրասենյակ, որն անհրաժեշտ է երկարաձգում ձեռք բերելու համար, եթե երաշխավորված է:

Դ. Հավասարություն. Հաղորդակցությունը Կողմերի հետ. Սեռական ոտնձգության (Title IX) գործերում, բոլոր կողմերը պետք է հավասարապես վերաբերվեն: Ծանուցման նույն քանակը և նույն հնարավորությունները՝ տեղեկատվությունը ներկայացնելու կամ հայտնվելու համար, երկու կողմերին էլ պետք է տրամադրվեն, և նույն ծառայությունները պետք է երկու կողմերին էլ հասանելի լինեն:

Ե. Ծանուցումներ

1. <u>Ծանուցումներ Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին</u>

   Հինգ (5) աշխատանքային Օրվա ընթացքում՝ Բողոքը ստանալուց հետո կամ էական հիմնավորման նպատակով, այնքանով որ կիրառելի է, Նորմատիվփիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցը պետք է ծանուցեն Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին Բողոքի ստացման մասին և, որ հետաքննությունը սկսվել է:

2. <u>Ծանուցում ադմինիստրացիային</u>

   Հինգ (5) աշխատանքային Օրվա ընթացքում Բողոքը ստանալուց հետո կամ էական հիմնավորման նպատակով, այնքանով որ կիրառելի է, Նորմատիվփիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցը պետք է տրամադրի բնօրինակ Բողոքը

Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի Տնօրենին, պատճենը ուղարկելով համապատասխան Քոլեջի Նախագահին կամ Կրթական ծառայությունների կենտրոնում՝ Տնօրենի տեղակալին։

3. Ծանուցում Պատասխանողին/Ենթադրյալ տուժող

Հինգ (5) աշխատանքային Օրվա ընթացքում Բողոքը ստանալուց հետո կամ էական հիմնավորման նպատակով, այնքանով որ կիրառելի է, Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցը պետք է Բողոքի ամփոփագիրը տրամադրի Պատասխանողին/Ենթադրյալ հանցագործին։ Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցը պետք է ապահովի, որ Զեկուցող անհատի և/կամ Ենթադրյալ տուժողի և այլ անհատների վերաբերյալ անձնական տեղեկատվությունը, ովքեր կարող են նշված լինել Բողոքում, անպայմանորեն չպետք է բացահայտվի ենթադրյալ հանցագործին։

## VIII. Title IX (Գլուխ IX)

Ա. Քոլեջը կամ Կրթական ծառայությունների կենտրոնի Վարքային միջամտության թիմը, Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմը։

1. Յուրաքանչյուր Քոլեջի նախագահը և Կրթական ծառայությունների կենտրոնի Տնօրենի տեղակալը պետք է նշանակեն Վարքային միջամտության թիմ։ Յուրաքանչյուր Վարքային միջամտության թիմ իր անդամների միջից կնշանակի Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմ՝ հովանավորելու Քոլեջին (կամ Կրթական ծառայությունների կենտրոնին) Սեռական ոտնձգությանն առնչվող կանխարգելման, միջամտության և կրթական փորձերը։ Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմը պետք է կազմված լինի մեկ անձից ավել անձանցից։ Երաշխավորված թիմի անդամները ներառում են Արագ արձագանքման թիմ, երկու (2) խորհրդատու, քոլեջի իրավապահ մարմնի ներկայացուցիչ, Ուսանողների ծառայությունների Փոխնախագահ կամ ուսանողների հարցերով այլ պատվիրակ, աշխատակցի հարցերով տվյալ վայրում նշանակված անձ, Քոլեջի կամ Կրթական ծառայությունների կենտրոնի Title IX Համակարգող, և ըստ տվյալ վայրին անհրաժեշտ լրացուցիչ ներկայացուցիչներ։ Այս ցանկը

կիարմարեցվի այնպես, որ համապատասխանի Կրթական ծառայությունների կենտրոնի հետ:

Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմը վերանայի նախկին Առողջության շահերի պաշտպանության արձագանքման թիմը. Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմը պետք է նշանակված լինի տվյալ վայրի անունով, ինչպես նաև Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմի նշանակումով, օրինակ՝ Pierce Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմ, Harbor Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմ, City Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմ կամ Կրթական ծառայությունների կենտրոնի Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմ:

2. Միջոցների ցանկ. Քոլեջի Title IX Համակարգողը, Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմի անդամը (կամ Կրթական ծառայությունների կենտրոնում Title IX Համակարգողը) պետք է պահպանեն համայնքային գործակալությունների ընթացիկ ցանկը, որից անհատները կարող են ստանալ հետագա աջակցությունը: Այս հղումները պետք է ներառեն, սակայն չեն սահմանափակվում. խորհրդատվական բաժանմունք, ֆակուլտետի խորհրդատուներ, կանանց վերամուտքագրման կենտրոններ, առողջապահական կենտրոններ, ճամբարի իրավապահ մարմին, Վարչական ծառայությունների գրասենյակ, Աշխատակցի աջակցության ծրագիր, աշխատակցի ներկայացուցիչ, միություն, բռնաբարության վնասվածքաբանության կենտրոններ, բժշկական կառույցներ, բռնաբարության խորհրդատվական կենտրոններ և կանանց աջակցության կենտրոններ: Սրանք միջոցներ են, որոնցով սեռական հարձակման Զեկուցող անհատները և/կամ Ենթադրյալ տուժողները, ինչպես նաև Պատասխանողները և Ենթադրյալ հանցագործները կարող են աջակցության համար դիմել: Այս ցանկը պետք է տրամադրվի բոլոր սեռական հարձակման ոտնձգության կողմերին իրենց իրավունքների, Բողոքների և ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվության հետ մեկտեղ:

3. Քոլեջի Title IX Համակարգողը, Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմի անդամը (կամ Կրթական ծառայությունների կենտրոնում Title IX Համակարգողը) պետք է նույնականացվեն որպես քոլեջի (կամ Կրթական ծառայությունների

կենտրոնի) կոնտակտային անձի տվյալներ այն հարցերի համար, որոնք առնչվում են Սեռական ոտնձգության հաշվետվողականության, կանխարգելման և արձագանքման հետ։

4. Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմի առնվազն մեկ անդամ պետք է նշանակված լինի որպես Արագ արձագանքող աշխատակից։ Եթե սա Քոլեջի Title IX Համակարգողը չէ, Արագ արձագանքող աշխատակիցը, որքան հնարավոր է արագ պետք է զեկուցի Title IX Համակարգողին բոլոր միջադեպերի մասին։ Իդեալական է, երբ Արագ արձագանքող աշխատակիցը առաջին պաշտոնական կոնտակտային անձն է այն անձի հետ, ով վկայակոչում է, որ սեռական հարձակման է ենթարկվել։ Արագ արձագանքող աշխատակիցները կապահովեն, որ Սեռական ոտնձգության Ենթադրյալ տուժողները տեղեկացվեն քոլեջի, Օկրուգի և համայնքային միջոցների մասին, որոնք հասանելի են նրանց աջակցություն տրամադրելու համար, ներառյալ ճամբարի իրավապահ մարմինը (տե՛ս ստորև)։ Արագ արձագանքող աշխատակիցը պետք է որակավորվի և վերապատրաստվի՝ արձագանքելու այն մարդկանց, ովքեր կարող են ճգնաժամում լինեն՝ հենց վնասվածքաբանական միջադեպի են հանդիպել։ Առաջին ուսանողները կարող են ծառայել Քոլեջի Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմում, սակայն չպետք է նշանակվեն որպես Արագ արձագանքող աշխատակիցներ, քանի դեռ նրանք նույնպես աշխատանքի են ընդունվել քոլեջի կողմից և այլապես են որակավորվել։

5. Օկրուգում Սեռական ոտնձգության տուժողները (Քոլեջում կամ Կրթական ծառայությունների կենտրոնում) տարբերակ ունեն միջադեպի մասին ծանուցելու կամ Արագ արձագանքման աշխատակցին Սեռական ոտնձգության իրազեկվածության և արձագանքման թիմից կամ Օկրուգի անվտանգության/քոլեջի իրավապահ մարմնին (բոլոր վայրերում սա Շերիֆների դեպարտամենտն է)։ Եթե սեռական հարձակումը սկզբում զեկուցվում է այն աշխատակցին, ով Արագ արձագանքող աշխատակից, Title IX Համակարգող կամ քոլեջի իրավապահ մարմին չէ, այդ աշխատակիցը սույնով սահմանվածի համաձայն՝ Պատասխանատու աշխատակից է և պարտավորված է զեկուցել, թե ինչ են իրեն պատմել Title IX Համակարգողին։ Պատասխանատու աշխատակիցը նաև կարող է ապահովել Ենթադրյալ տուժողին Title IX Համակարգողին կամ Քոլեջի իրավապահ մարմնին զեկուցելու ընտրանքով։

Բ. Ուսանող պատասխանողներ

1. Երբ Պատասխանողը/Ենթադրյալ տուժողը ուսանող է, համաձայն Հոդված XI-ի 91101.11-րդ բաժնի բ կետում սահմանված Ուսանողի կարգապահական ընթացակարգերի, պատժի մի քանի մակարդակներ են հնարավոր: Ուսանողի կողմից Սեռական ոտնձգության դեպքերում, պատժամիջոցները (կարգապահական գործողությունները) պետք է համարժեք լինեն այն պատժին, որը տրվել է աշխատակցի կամ այլ ոչ ուսանող Պատասխանողի համար: Օրինակ՝ եթե աշխատակիցը պետք է հեռացվի (կամ դադարեցվի իր պայմանագիրը) իր աշխատանքից, ուսանողը պետք է հեռացվի դպրոցից:

2. Ուսանողի կողմից Սեռական ոտնձգություն վկայակոչող Բողոքները պետք է հետաքննվեն Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակցի կողմից: Եթե ուսանող Պատասխանողը սահմանված է որպես պատասխանատու վկայակոչվող ակտերի համար, հարցը կարող է վերաբերվել ուսանողական կարգապահությանը: Որևէ միջանկյալ պատժամիջոց պետք է հաջորդի Գլուխ IX-ում, Խորհրդի կանոնների Հոդված XI-ում նշված ուսանողական կարգապահական գործընթաց:

Գ. Աշխատակից Պատասխանողներ

Սույն փաստաթղթում նշված ընթացակարգերը կիրառվում են աշխատակից պատասխանողների համար ևս, եթե այլ բան հստակ նշված չէ, որոնք որ վերաբերում են անմիջապես վերևում նշված Ուսանող Պատասխանողներին:

Դ. Երբ Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցը ավարտում է հետաքննությունը, նա պետք է հաշվետվություն ներկայացնի քոլեջի նախագահին կամ Կանցլերի տեղակալին Կրթական ծառայության կենտրոնում: Քոլեջի տնօրենը կամ Տնօրենի տեղակալը սահմանում է, արդյոք ոչ Պատասխանողն է պատասխանատու վկայակոչված գործերի համար:

## IX. Սեռական ոտնձգության հետաքննություն և հաշվետվողականություն

Ա. Սեռական ոտնձգության բողոքի մասին տեղեկանալուց հետո, Title IX Համակարգողը կամ տվյալ վայրի Քոլեջի Title IX Համակարգողը պետք է անեն հետևյալը՝

1. Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին և ենթադրյալ հանցագործին (եթե ինքնությունը հաստատվել է) տրամադրեն տեղեկատվություն Սեռական ոտնձգության բողոքների լուծման համար Օկրուգի քաղաքականության մասին, ներառյալ Անձի անձնական տվյալների պահպանության և Գաղտնիության մասին տեղեկատվությունը և այն միջոցների մասին (և ճամբարում և նրա սահմաններից դուրս), որոնք հասանելի են նրան՝ աջակցելու սույն հարցի լուծման համար,

2. Տեղեկացնեն Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին բժշկական վկայության պահպանման հնարավոր անհրաժեշտության մասին, որը կարող է աջակցել հետագա իրավական կամ կարգապահական գործողությանը,

3. Տեղեկացնեն Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին, որ Title IX Համակարգողից և Քոլեջի Title IX Համակարգողից պահանջվում է զեկուցել միջադեպի մասին: Title IX Համակարգողը պետք է նաև տեղեկացնի Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին, որ եթե նա չի ցանկանում հետաքննություն, ապա նա կարող է խոսել ինչ-որ մեկի հետ, ով կարող է պահպանել Զեկուցող անհատի և/կամ Ենթադրյալ տուժողի Գաղտնիությունը: Մեկ անհատը, ով կարող է պահպանել Գաղտնիությունը Հոգեկան առողջության մասնագետ է, ով գործում է իր մասնագիտական կարողությամբ: Կրթական ծառայությունների կենտրոնում այն աշխատակիցը, ով ցանկանում է գաղտնի հաշվետվություն տալ, խորհուրդ է տրվում կապ հաստատել Աշխատակցի աջակցման ծրագրի/MHN-ի հետ կամ գնալ կանանց աջակցության տեղական կենտրոն կամ բռնաբարության ճգնաժամային կենտրոն,

4. Տեղեկացնեն Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին սույն հարցը զեկուցելու իր իրավունքի մասին կամ ճամբարին կամ Կրթական ծառայությունների կենտրոնի իրավապահ մարմնին և/կամ Տեղական ոստիկանության բաժնին, և

5. Տեղեկացնեն Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին այն իրավաբանական և կարգապահական տարբերակների մասին, որոնք նրանց հասանելի են, ներառյալ

**ա**. քրեական հետապնդումներ,

բ. քաղաքացիական հայց, և

գ. համապատասխան Օկրուգի կարգապահական գործընթաց (և որ այս միջոցի օգտագործումը չի կանխում քրեական կամ քաղաքացիական պաշտպանությունից), և

6. Միջադեպի մասին տեղեկացնեն Քոլեջին կամ Կրթական ծառայությունների կենտրոնի իրավապահ մարմնին (ինչպես տվյալ վայրին է համապատասխան), Clery հաշվետվողականության նպատակների համար՝ առանց անուններ տրամադրելու, և

7. Համակարգեն ընթացիկ ճամբարը/Կրթական ծառայությունների կենտրոնը և համայնքային աջակցությունը։

B. Երբ Սեռական ոտնձգության հայտարարության է արվում ճամբարին կամ Կրթական ծառայությունների կենտրոնի իրավապահ մարմնին, ճամբարը/Կրթական ծառայությունների կենտրոնի իրավապահ մարմինը պետք է հետևյալը անեն.

1. Ըստ անհրաժեշտության անհապաղ բժշկական օգնություն տրամադրեն,

2. Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին տեղեկացնեն որևէ հավանական կարիքի մասին՝ պահպանելու բժշկական վկայությունը, որը կարող է ազդել հետագա իրավական կամ կարգապահական գործողության վրա,

3. Գաղտնիություն. Տեղեկացնեն Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին, որ իրավապահ մարմնից պահանջվում է տեղեկացնել տվյալ հարցի վերաբերյալ իրենց վայրում, և հենց տեղեկացվում է, Title IX Համակարգողը պետք հետաքննի միջադեպը և զեկուցի, թե նա այդ մասին ինչ է իմացել։ Իրավապահ մարմինը պետք է բացատրի Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին, որ եթե նա չի ցանկանում հետաքննություն, ապա նա կարող է ընտրել գնալ Առողջապահական կենտրոն ճամբարում և խոսել Հոգեկան առողջության մասնագետի հետ, որը գործում է իր մասնագիտական կարողությամբ, կամ Կրթական ծառայությունների կենտրոնի աշխատակցի համար, կապ հաստատեն

Աշխատակցի աջակցության ծրագրի/MHN-ի հետ, և խուսափեն զեկուցման պահանջից,

4. Փորձեն ենթադրյալ հանցագործի ինքնությունը հաստատել,

5. Ռեսուրսներ. Համապատասխան համայնքային ծառայությունների հղումներ տրամադրեն Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին և Պատասխանողին, որոնցից նա կարող է ստանալ հետագա աջակցություն: Այս հղումները պետք է ներառեն, սակայն չսահմանափակվեն այնպիսի վայրերով ինչպիսիք են, քոլեջի խորհրդատվական բաժին, ֆակուլտետի խորհրդատուներ, կանանց վերամուտքագրման կենտրոններ, առողջապահական կենտրոններ, Ճամբար կամ Կրթական ծառայության կենտրոններ, առողջապահական կենտրոններ, Ճամբար կամ Կրթական ծառայության կենտրոնների իրավապահ մարմին, Վարչական ծառայությունների գրասենյակ, Աշխատակցի աջակցության ծրագիր (Հոգեկան առողջության ցանց) [EAP/MHN], աշխատակցի ներկայացուցիչներ, միություններ, Փաստաբաններ, բռնաբարության ճգնաժամային կենտրոններ, հոգեկան առողջության հաստատություններ և կանանց աջակցության կենտրոններ:

6. Տեղեկացնեն Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին հավանական իրավաբանական և կարգապահական տարբերակների մասին Պատասխանողի համար, եթե խելամիտ է համարվում, ներառյալ որևէ կետ կամ բոլոր հետևյալը.

   **ա.** քրեական հետապնդումներ,

   **բ.** քաղաքացիական հայց, և

   **գ.** համապատասխան Օկրուգի կարգապահական հայց:

7. Սեռական հարձակման վերաբերյալ ծանուցված լինելուց հետո քսան-չորս (24) ժամ անց, Զեկուցող անհատի և/կամ Ենթադրյալ տուժողի համաձայնությամբ, Ճամբարը/Կրթական ծառայությունների կենտրոնի իրավապահ մարմինը պետք է ծանուցի Նախագահին/Տնօրենի տեղակալին կամ սեռական հարձակման Արագ արձագանքող աշխատակցին և Զեկուցող անհատի անունը, քանի դեռ անհատը անձնական տվյալների պահպանում չի պահանջել: Ճամբարը/Կրթական

ծառայությունների կենտրոնի իրավապահ մարմինը պետք է նաև տրամադրի նույն ծանուցումը Title IX Համակարգողին՝ կախված միջադեպի վայրից:

Գ. Նախագահը/Տնօրենի տեղակալը կամ նրա նշանակված անձը պետք է ուղղորդի ուսանող Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին՝ դիմելու Title IX Համակարգողին աջակցության նպատակով ուսանողական հաստատությունում, եթե նա կրել է ուսումնական դժվարություններ, որոնք կարող են առաջանալ սեռական հարձակման կամ ուսանողի մոտ դրա ազդեցության արդյունք: Title IX Համակարգողը, Գիտական աշխատանքների և/կամ Ուսանողական ծառայությունների Փոխնախագահի հետ համագործակցությամբ, կարող է ժամանակավոր պատժամիջոցներ տրամադրել՝ մեղմելու Զեկուցող անհատի կամ Ենթադրյալ տուժողի հանդեպ սեռական հարձակման անմիջական ազդեցությունը: Բացի այդ, Նախագահը/Տնօրենի տեղակալը կամ իր նշանակած անձը պետք է ուղղորդեն ուսանող Զեկուցող անհատին դիմելու տվյալ վայրի համար Title IX  Համակարգողին աշխատավայրի աջակցության համար (ինչպես օրինակ ժամանակավոր պատժամիջոցներ) կամ այլ անմիջական դժվարություններ, որոնք կարող են առաջանալ անհատի մոտ որպես սեռական հարձակման և դրա ազդեցության արդյունք:

Դ. Ժամանակավոր պատժամիջոցները այդ վայրում կիրականացվեն Title IX Համակարգողի կողմից, ինչպես որ պահանջվում է համաձայն իրավիճակի՝ առանձնացնելու Ենթադրյալ տուժողին և Պատասխանողին ըստ իրավիճակի: Նման ժամանակավոր պատժամիջոցները կարող են ներառել մեկ կողմի տեղափոխումը նույն դասի մեկ այլ բաժին կամ ուրիշ առցանց վայր՝ տրամադրելով Ենթադրյալ տուժողին ուղեկցորդով, ճամբարով մեկ, կամ թույլատրելով Ենթադրյալ տուժողին քննություններ վերցնել Պատասխանողից և/կամ ենթադրյալ հանցագործից ուրիշ վայրում և որևէ նմանատիպ իրավիճակ (ներ), որոնք նախատեսված են առանձնացնել կողմերին և նվազեցնել լարվածությունը նրանց մոտ, որն առաջացել է սույն միջադեպից և սույն հայտարարություններից:

Ե. Title IX Համակարգողը կամ Քոլեջի Title IX Համակարգողը, ըստ իրավիճակի, պետք է նաև պահպանի համայնքային գործակալությունների ընթացիկ ցանկը, որին սեռական հարձակման հայտարարությունների զեկուցող անհատները, ինչպես նաև Պատասխանողները կարող են աջակցության համար ուղղորդվել: Ցանկը պետք է պարունակի նույն ռեսուրսները, որոնց վերաբերյալ հղումը արված է վերը նշված VIII.Ա.2 բաժնում:

Զ. Զեկուցող անհատը և/կամ Ենթադրյալ տուժողը պետք է Պատասխանողի հանդեպ կարգապական վարույթների վիճակի վերաբերյալ տեղեկացված

լինեն, որոնք առաջացել են վկայակոչված սեռական հարձակումից և օրենքով թույլատրելի չափով արդյունքներից:

Է. Այն դեպքում, երբ սեռական հարձակման վերաբերյալ զեկուցումը ընդգրկում է Վարվեցողության նորմերի խախտման կամ խախտումների բացահայտումը, ինչպես օրինակ ալկոհոլի և/կամ այլ արգելված նյութի օգտագործման կամ չարաշահմանն առնչվող, քոլեջը կարող է ներման շնորհումը դիտարկի Զեկուցող անհատի և/կամ Ենթադրյալ տուժողի հանդեպ, ով զեկուցել էր առնչվող Վարվեցողության խախտմանը վերաբերող սեռական հարձակումը:

Ը. Նախագահը/Տնօրենի տեղակալը կամ նրա նշանակած անձը պետք է ապահովեն, որ ուսումնական ճամբարում զեկուցվող սեռական հարձակումների մասին տեղեկատվությունը, ներառյալ Title IX Համակարգողի և Քոլեջի Title IX Համակարգողի անունները, քոլեջի հրապարակումներում հղումներն արված են, ինչպես օրինակ կատալոգը, դասացուցակը և քոլեջի կայքը: Նման տեղեկությունները պետք է նշեն, որ վերը նշված VIII.Ա.2-ում հղում արված ռեսուրսների ցանկը կարող են ձեռք բերվել Title IX Համակարգողից տվյալ վայրում կամ քոլեջի/Կրթական ծառայության կենտրոնի իրավապահ մարմնից: Հասանելի ռեսուրսների ցանկը կթարմացվի տարեկան կտրվածքով:

Թ. Սեռական հարձակման մասին տեղեկատվության հարցումները յուրաքանչյուր վայրի համար պետք է ուղղորվեն համապատասխան Քոլեջի Նախագահին կամ նշանակված Title IX Համակարգողին նման միջադեպերի համապատասխան վայրի հիմունքներով:

## X. <u>Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակցի հաշվետվությունը</u>

Ա. Սույն քաղաքականության պոտենցիալ խախտման մասին տեղեկանալուց հետո վաթսուն (60) օրացուցային Օրվա ընթացքում, Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակիցը պետք է ավարտեն հետաքննությունը և գրավոր հաշվետվություն ներկայացնեն Քոլեջի Նախագահին կամ Կրթական ծառայությունների կենտրոնում՝ Տնօրենի տեղակալին: Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակցի հաշվետության պատճենը պետք է ուղարկվի Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի Տնօրենին: Սեռական ճնշման կամ Սեռական ոտնձգության հետաքննության դեպքում, Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման

աշխատակցի հաշվետվության պատճենը պետք է նաև ուղարկվի Title IX Համակարգողին:

**Բ.** Նամակի բանավոր ներկայացում.

Քոլեջի նախագահը կամ Կրթական ծառայությունների կենտրոնում Տնօրենի տեղակալը պետք է հաստատված էլեկտրոնային նամակի ստացման հաստատման պահանջով ուղարկեն Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին և Պատասխանողին Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակցի ամփոփ հաշվետվությունը՝ Նամակի բանավոր ներկայացմամբ: Գաղտնիության իրավունքները պաշտպանելու և վրեժի վտանգը նվազեցնելու նպատակով, ամբողջական հաշվետվությունը պետք է գաղտնի լինի այն անձի համար, որը պատասխանատու է Գրավոր որոշումը պատրաստելու համար և չպետք է տրամադրվեն Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին կամ Պատասխանողին, բացառությամբ իրավական գործընթացով պահանջվող դեպքերի:

Նամակի բանավոր ներկայացումը ծանուցում է Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին և Պատասխանողին, որ նրանք իրավունք ունեն Քոլեջի Նախագահին կամ Տնօրենի տեղակալին Կրթական ծառայությունների կենտրոնում աշխատակիցների համար բանավոր հայտարարություն անել, պայմանով, որ անձը, ով ցանկանում է այդպես անել, պետք է հաշվետվության ամփոփման ստացումից հետո տասնհինգ (15) Օրվա ընթացքում անց հասանելի լինի:

**Գ.** Եթե հայտարարությունները ընդգրկում են Քոլեջի Նախագահին, հաշվետվությունը պետք է ներկայացվի Տեղակալին: Եթե հայտարարությունները ընդգրկում են Փոխտնօրենին կամ մեկ այլ անձի, որը Տնօրենի անմիջական ենթակայության տակ է գտնվում, հաշվետվությունը պետք է ներկայացվի Տնօրենին, պատճենը՝ Հոգաբարձուների խորհրդին: Եթե հայտարարությունները ընդգրկում են Տնօրենին, հաշվետվությունը պետք է ներկայացվի Տնօրենի տեղակալին, պատճենը՝ Հոգաբարձուների խորհրդին: եթե Բողոքը ընդգրկում է Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակցին կամ Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի Տնօրենին, Բողոքը պետք է ուղղորդվի Տնօրենի տեղակալին, ով մեկ այլ Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակից կնշանակի՝ հետաքննելու և ով պետք է կատարի Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի Տնօրենի պարտականությունները՝ սույն քաղաքականությունը իրականացնելու նպատակով:

Դ. Հաշվետվության ամփոփումը պետք է տրամադրվի Զեկուցող անհատին և Ենթադրյալ տուժողին, եթե տարբեր է, ինչպես նաև Ենթադրյալ հանցագործին: Գաղտնիության իրավունքները պաշտպանելու նպատակով, ամբողջական հաշվետվությունը պետք է գաղտնի լինի այն անձի համար, ով պատասխանատու է Գրավոր որոշման պատրաստման համար, և չպետք է տրամադրվեն զեկուցող անհատին, Ենթադրյալ տուժողին կամ Ենթադրյալ հանցագործին, բացառությամբ իրավական գործընթացով պահանջվող դեպքերի:

## XI. Որոշում

Ա. Քոլեջի նախագահը կամ Տնօրենի տեղակալը պետք է Գրավոր որոշումը կանոնավոր գործող էլեկտրոնային և պատվիրված նամակով՝ հետադարձի ստացման պահանջով, ուղարկեն Զեկուցող անհատին և/կամ Ենթադրյալ տուժողին և Պատասխանողին՝ իրենց համապատասխան Բողոքարկման իրավունքներով համաձայն ստորև նշված "Բ" բաժնի: Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի Տնօրենը պետք է պատասխանատու լինի Գրավոր որոշման պատճենը Նահանգային կանցլերի գրասենյակ ուղարկելու համար, երբ Գլուխ 5-ի 59336-րդ բաժինն է պահանջում:

Բ. Գրավոր որոշում. Արգելված խտրականության և (ոչ սեռական բնույթի) Անօրինական ճնշման գործերի, համաձայն Գլուխ 5-ի 59336-րդ բաժնի, Գրավոր որոշումը պետք է կայացվի հետաքննության մեկնարկից իննսուն (90) օրվա ընթացքում: Սեռական ճնշում և Սեռական ոտնձգություն ներառող գործերը, ներառյալ համակցված գործերը, համաձայն 1972թ-ի Կրթական բարեփոխումների Title(Գլուխ) IX-ի պահանջների, Գրավոր որոշումը պետք է կայացվի վաթսուն (60) Օրվա ընթացքում: Բոլոր գործերի տեսակներում, Գրավոր որոշումը պետք է ներառի հետևյալը.

1. Քոլեջի Նախագահի կամ Տնօրենի տեղակալի որոշումը, արդյոք փաստարկի գերակայությունն աջակցում է այն որոշումը, որ արգելված խտրականությունը, անօրինական ճնշումը և/կամ Սեռական ոտնձգությունը տեղի է ունեցել Բողոքում առկա յուրաքանչյուր հայտարարության հետ կապված:

2. Բողոքի առաջարկվող լուծումը և ձեռնարկվող գործողությունը՝ կանխելու ապագայում նմանատիպ դեպքերը, համաձայն իրավիճակի և

3. Հետևյալ հայտարարությունը.

«Խնդրում ենք նկատի ունենալ, որ Զեկուցող անհատը և/կամ Ենթադրյալ տուժողը Սեռական ոտնձգության գործերում ինչպես նաև Պատասխանողը/Ենթադրյալ հանցագործը, իրավունք ունեն

Բողոքարկելու սույն որոշումը Օկրուգի Հոգաբարձուների խորհրդում՝ Գրավոր բողոք ներկայացնելով Օկրուգի Նախագահի գրասենյակ տասնհինգ (15) Օրվա ընթացքում սույն ծանուցման ամսաթվից սկսած: Խորհուրդը կարող է վերանայել հարցը և գործել Բողոքի ստացումից քառասունհինգ (45) Օրվա ընթացքում: Եթե քառասունհինգ (45) Օրը անցել է առանց Հոգաբարձուների խորհրդի գործողության, սույն Որոշումը համարվում է Օկրուգի վերջնական Որոշում:

4. Զբաղվածությունից չբխող կամ դրան չառնչվող գործերում, Գրավոր որոշումը պետք է նաև ներառի հետևյալ հայտարարությունը. «Խնդրում ենք նկատի ունենալ, որ այսուհետ Զեկուցող անհատը և/կամ Ենթադրյալ տուժողը, և Սեռական ոտնձգության գործերում Պատասխանողը/Ենթադրյալ հանցագործը իրավունք ունեն գրավոր Բողոք ներկայացնելու Նահանգային կանցլերին երեսուն (30) Օրվա ընթացքում, Հոգաբարձուների խորհրդի կողմից Օկրուգի վերջնական Որոշման տրամադրումից հետո կամ քառասունհինգ (45) օրը սպառվել է, որը որ առաջինն է պատահում:

Սույն հայտարարությունը չպետք է ներառի որևէ հարց, որն Արգելված խտրականության հայտարարություններ հղիության, ամուսնական, վետերանի կարգավիճակի կամ աշխատակցի բժշկական վիճակին առնչվող քաղցկեղի հիման վրա, որովհետև Կալիֆորնիայի Կրթության օրենսգրքի 5-րդ Գլուխը նման հարցերի համար Նահանգային կանցլերին ուղղված Բողոքարկման որևէ իրավունք չի տալիս,

Գ. Բոլոր վերջնական Գրավոր որոշման նամակները, որոնք հիմնավորում են հայտարարությունը (ները), ուղարկվում են այն կողմերին, ովքեր աշխատակիցներ են, պետք է նաև ներառեն հետևյալ հայտարարությունը.

«Համապատասխան Արգելված խտրականության, Անօրինական ճնշման և Սեռական ոտնձգության Բողոքների համար նախատեսված Օկրուգի ընթացակարգերի 11Գ պարբերության, սույն գրավոր Որոշման պատճենը պետք է պահպանվի ձեր անձնական գործում՝ կնքված ծրարի մեջ: Դուք իրավունք ունեք ներկայացնելու պատասխան սույն Որոշմանը, որը նաև պետք է պահպանվի ձեր անձնական գործում»:

Դ. Բոլոր վերջնական Գրավոր որոշման նամակները, որոնք հիմնավորում են հայտարարությունը (ները) և ուղարկվում են ուսանող Պատասխանողներին, պետք է ներառեն հետևյալ հայտարարությունը.

«Համապատասխան Արգելված խտրականության, Անօրինական ճնշման և Սեռական ոտնձգության Բողոքների համար նախատեսված Օկրուգի ընթացակարգերի 11Դ պարբերության, ձեր արձանագրությունները պետք է պարունակեն հետևյալ նշումներից որևէ մեկը, համաձայն իրավիճակի՝

‘Կարգապահական հեռացում,’ ‘Կարգապահական կասեցում,’ ‘Բողոքարկվող Կարգապահական գործ,’ կամ ‘Կոնֆլիկտի կարգավորման չորոշված հեռացում’»:

Ե. Եթե Բողոքը կամ ենթադրյալ խախտումը ընդգրկում է Նախագահին և չի առաջանում կամ չի առնչվում զբաղվածությանը, հաշվետվությունը պետք է ներառի վերը նշված XI.Բ.1 և XI.Բ.2 կետերը և հետևյալ հայտարարությունը.

«Զեկուցող անհատը և/կամ Ենթադրյալ տուժողը և Սեռական ոտնձգության գործերում Պատասխանողը իրավունք ունեն ներկայացնել սույն Որոշման գրավոր բողոքը Կալիֆորնիայի համայնքային քոլեջների Նահանգային Կանցլերի գրասենյակ սույն Որոշման ամսաթվից երեսուն (30) Օրվա ընթացքում»:

Համաձայն Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի 5-րդ Գլխի, սույն հայտարարությունը չպետք է ներառվի, և Նահանգային կանցլերին բողոքարկման որևէ իրավունք առկա չէ որևէ հարցի վերաբերյալ, որոնք ներառում են Արգելված խտրականության հայտարարությունները հղիության, ամուսանական, վետերանի կարգավիճակի կամ աշխատակցի քաղցկեղին առնչվող բժշկական վիճակի հիման վրա:

Զ. Գրավոր որոշման պատճենը, որը հիմնավորում է հայտարարությունները, պետք է տեղադրվի կնքված ծրարով, տվյալ աշխատակցի անձնական գործում, որը ներգրավված է որպես Զեկուցող անհատ և/կամ Ենթադրյալ տուժող և Պատասխանող: Տվյալ աշխատակիցը իրավունք ունի Գրավոր որոշմանը պատասխան ներկայացնել, որը նույնպես կտեղադրվի աշխատակցի անձնական գործում:

Է. Համաձայն Արգելված խտրականության, Անօրինական ճնշման և Սեռական ոտնձգության բողոքների մասով Օկրուգի ընթացակարգերի XI.Դ պարբերության, ուսանող Պատասխանողի արձագանքությունները, ով պատասխանատու է համարվել վկայակոչված խախտումների համար, պետք է պարունակեն հետևյալ նշումներից որևէ մեկը համաձայն իրավիճակի՝ ‘Կարգապահական հեռացում,’ ‘Կարգապահական կասեցում,’ ‘Բողոքարկվող Կարգապահական գործ,’ կամ ‘Կոնֆլիկտի կարգավորման չորոշված հեռացում’»:

## XII. Կարգապահական գործ

Ա. Պատշաճ գործընթաց. Կարգապահական գործը, եթե առկա է, պետք է անցկացվի Պատասխանողի/ենթադրյալ հանցագործի պատշաճ գործընթացի իրավունքների համաձայն, ինչպես սահմանված է օրենքով, Խորհրդի կանոններով, Անձնակազմի հանձնաժողովի կողմից, Ուսանողի

կարգապահական քաղաքականությամբ և ընթացակարգերով և/կամ կիրառելի հավաքական համաձայնագրով կամ Փոխըմբռնման հուշագրով։

Բ. Երբ որոշումը կայացվել է, կարգապահական գործ պետք սկսվի, Քոլեջի Նախագահը կամ Կրթական ծառայության կենտրոնում Տնօրենի տեղակալը կամ Տնօրենը կամ իր նշանակած անձը, պետք է մեկնարկեն կիրառելի կարգապահական գործընթացը Գրավոր որոշման տրամադրումից հետո տաս (10) աշխատանքային Օրվա ընթացքում կամ հիմնավոր պատճառի դեպքում, հենց որ այն կիրառելի է։

Սեռական ոտնձգության (Title (Գլուխ) IX) գործերում, հարցի բոլոր կողմերը (Պատասխանող և Զեկուցող անհատ և/կամ Ենթադրյալ տուժող) պետք է ստանան կարգապահական գործընթացի բոլոր քայլերին վերաբերող նույն ծանուցումները և ուղարկվեն միաժամանակ։ Նրանց բոլորին պետք է տրվեն լսելի լինելու համարժեք իրավունքներ և Փաստաբանի հասանելիություն, և պետք է ստանան կարգապահական գործերի արդյունքի համեմատելի ծանուցումը, որը ենթակա է կողմերի իրավական և Օկրուգի սահմանափակումներին առնչվող քաղաքականությանը։ Բոլոր կողմերը պետք է ծանուցվեն, որ կարգապահական գործ է սկսվել հատուկ մանրամասներով հանդերձ, որոնք բավարար են բարելավելու անձի մտահոգությունները, ով բռնությունների առարկան է հանդիսանում՝ ենթակա կողմերի իրավական և Օկրուգի սահմանափակումներին առնչվող քաղաքականությանը։

Վերահսկողի կամ Ադմինստրատորի կողմից ստանալու ձախողումը անմիջապես ընթացք տալու կարգապահական գործը, պետք է կարգապահական գործի հիմք լինի, ընդհուպ մինչև հեռացման։ Ստացող Վերահսկողը կամ Ադմինիստրատորը պետք է զեկուցեն Քոլեջի Նախագահին կամ Կրթական ծառայությունների կենտրոնում՝ Տնօրենի տեղակալին կամ Տնօրենին կարգապահական վիճակի մասին ժամանակին և կանոնավոր կերպով։ Հաշվետվության պատճենը պետք է ներկայացվի Title IX Համակարգողին և Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակին։

Գ. Աշխատակիցներ. Կարգապահական գործերը, եթե առկա են, պետք է իրականացվեն Պատասխանողի պատշաճ գործընթացի իրավունքների համաձայն, ինչպես սահմանված են օրենքով, Խորհրդի կանոններով, Անձնակազմի հանձնաժողովի կողմից և/կամ որևէ կիրառելի հավաքական համաձայնագրով կամ Փոխըմբռնման հուշագրով։ Աշխատակիցների նկատմամբ կարգապահական գործը առանց սահմանափակման պետք է ներառի բանավոր զգուշացումներ, նկատողություն պարունակող նամակներով, Անբավարար ծառայության ծանուցումներով, կասեցումներով, պաշտոնի իջեցումներով կամ պաշտոնաթողություններով։

Դ. Ուսանողներ. Ուսանողի նկատմամբ որևէ կարգապահական գործ պետք է իրականացվի՝ համաձայն Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի և Խորհրդի կանոնների (այն է՝ Գլուխ IX, Հոդված XI): Կարգապահական գործերը համաձայն IX-րդ Գլխի, XI-րդ Հոդվածի պետք է ներառեն, սակայն չեն սահմանափակվում զգուշացումներով, փորձաշրջանով կամ հեռացմամբ:

Ե. Պատասխանողի պատշաճ գործընթացի իրավունքները պետք է ընդհանրապես պահանջեն Նորմատիվաիրավականության համապատասխանության վերահսկման աշխատակցի ամփոփ հաշվետվությունը, մինչ Պատասխանողին կասկածանք է առաջադրվում որպես աջակցություն հավանական վճարման կորուստ կամ հեռացում: Ամեն դեպքում, որոշ բաներ ինչպիսիք են ուսանողի գրառումները, վկաների հեռախոսահամարները կամ հասցեները կարող են արգելափակվեն՝ անձնական տվյալների պահպանման շահերը պաշտպանելու նպատակով:

Զ. Բոլոր դեպքերում, երբ Քոլեջի Նախագահը կամ Տնօրենի տեղակալը սահմանել են, որ հավանական պատճառ կա՝ աջակցելու Սեռական ոտնձգության հիմնավորումը, ապա հարցը պետք է նաև զեկուցվի Քոլեջի կամ Կրթական ծառայությունների կենտրոնի Title IX Համակարգողին՝ գրառումների պահպանման նպատակով:

## XIII. <u>Բողոքարկումներ</u>

Ա. Զեկուցող անհատի և/կամ Ենթադրյալ տուժողի կողմից արված բողոքարկումները Արգելված խտրականության և Անօրինական ճնշման դեպքերում (ոչ Սեռական ոտնձգության գործերում) պետք է անցկացվեն ստորև նկարագրվածի համաձայն.

1. Տնօրենից բացի մեկ այլ անձ ընդգրկող բողոքները, եթե Զեկուցող անհատը և/կամ Ենթադրյալ տուժողը բավարարված չեն կայացված Գրավոր որոշմամբ, նա պետք է գրավոր բողոքարկումը ներկայացնի Հոգաբարձուների խորհրդին Գրավոր որոշման փոստային կնիքի ամսաթվից տասնհինգ (15) Օրվա ընթացքում: Բողոքարկումը պետք է մանրամասնորեն նշի Բողոքարկման հիմքը:

2. Տնօրենին ընդգրկող Բողոքների համար, Հոգաբարձուների խորհրդի կողմից կայացված Գրավոր որոշումը պետք է կազմված լինի Օկրուգի վերջնական Որոշումից հետո:

Բ. Արգելված խտրականության և Անօրինական ճնշման գործերում Պատասխանողի կողմից արված բողոքարկումները (ոչ Սեռական

ոտնձգության գործերում) պետք է անցկացվեն համաձայն ստորև նկարագրվածի:

1. Ենթադրյալ հանցագործի կողմից արված Գրավոր որոշման բողոքարկումները պետք է կատարվեն՝ կատարելով համապատասխան բացարկները կիրառելի կարգապահական գործընթացի ընթացքում:

**Գ.** Սեռական ոտնձգության դեպքերի բողոքարկումները.

Այն դեպքում, երբ Սեռական ոտնձգության գործի որևէ կողմ բավարարված չէ Գրավոր որոշմամբ, նա պետք է Հոգաբարձուների խորհրդին ներկայացնի Գրավոր Բողոքարկումը տասնհինգ (15) Օրվա ընթացքում՝ Գրավոր որոշման փոստային կնիքի ամսաթվից հետո: Բողոքարկումը պետք է մանրամասնորեն նշի Բողոքարկման հիմքը: Բողոքարկումը ստանալուց անմիջապես հետո, Հոգաբարձուների խորհրդի Գործադիր տնօրենը պետք է տեղեկացնի Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի Տնօրենին կամ Title IX Համակարգողին: Բողոքարկման մասին տեղեկացված անհատը պետք է այնուհետև անմիջապես ծանուցի Բողոքարկման մյուս կողմին (երին) և իրենց իրավունքի մասին՝ մասնակցելու Բողոքարկման գործընթացին:

Չբողոքարկող կողմի (կողմերի) ծանուցումը պետք է նշի, որ Բողոքարկումը ներկայացվել է և ապա պետք է առաջարկի հնարավորություն՝ այցելելու և ներկա լինելու լսմանը և/կամ գրավոր պատասխան ներկայացնի, բոլորը տասնհինգ (15) աշխատանքային Օրվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ ծանուցումը ուղարկվել էր: Սույն լրացուցիչ Բողոքարկումը պետք է քննարկվի մյուս կողմի կողմից ներկայացված նախնական Բողոքարկման հետ համատեղ:

**Դ.** Գործողությունը Հոգաբարձուների խորհրդի կողմից.

Տնօրենը գրավոր Բողոքարկումը, Գրավոր որոշումը, Նորմատիվպահանջների իրավականության համապատասխանության վերահսկման աշխատակցի հաշվետվությունը և Հոգաբարձուների խորհրդի Բողոքը պետք է ներկայացնի փակ հանդիպման ժամանակ: Հոգաբարձուների խորհուրդը կարող է վերանայել Որոշումը և գործել քառասունհինգ (45) Օրվա ընթացքում: Եթե քառասունհինգ (45) Օրը սպառվել է առանց Հոգաբարձուների խորհրդի որևէ գործողության, Գրավոր որոշումը պետք է կազմված լինի Օկրուգի վերջնական Որոշումից:

## XIV. <u>Լրացուցիչ միջոցներ</u>

Զեկուցող անհատը և/կամ Ենթադրյալ տուժողը իրավունք ունեն ազատորեն հետապնդելու քաղաքացիական օրենքի միջոցներ, ներառյալ սակայն չի

սահմանափակվում կարգադրություններով, զսպեցնող հրամաններով կամ այլ հրամաններով: Անհատը, ով հավատում է, որ նա անօրինական խտրականության զոհ է, կարող է  բողոքը ներկայացնել Արդար զբաղվածության և Տնային պայմանների ապահովման բաժին և Հավասար զբաղվածության հնարավորության հանձնաժողովին: Զբաղվածությանը չվերաբերող Բողոքները պետք է ներկայացվեն Քաղաքացիական իրավունքների գրասենյակ, Ամերիկայի միացյալ նահանգների Կրթության դեպարտամենտ: Սրանք կարող են իրականացվել առանց հաշվի առնելու, արդյոք անհատը ընտրում է կիրառելու սույնով նկարագրված Օկրուգի ներքին Բողոքի ընթացակարգը: Որևէ մեկը, ով կարծում է, որ նա արգելված խտրականության, անօրինական ճնշման կամ Սեռական ոտնձգության զոհ է, պետք է տեղյակ լինի, որ թե՛ նահանգային, թե՛ դաշնային օրենքը Բողոքների ներկայացման համար սեղմ վերջնաժամկետներ են առաջադրում  և Օկրուգի ներքին Բողոքի ընթացակարգի օգտագործումը պետք է հետաձգվի կիրառելի վերջնաժամկետներում: